Azg
ARMENIAN DAILY

29 ՄԱՐՏ 2003 ՇԱԲԱԹ 60 (2745)

ԵՐԵՎԱՆ

Գրիպ-թոքաբորբի համաճարակը տարածվում է

Հոնկոնգում առաջիկա երկուշաբթի օրվանից դպրոցները փակվելու են: Երկու շաբաթ առաջ նկատված գրիպ-թոքաբորբի վարակն այստեղ արդեն խլել է 10 հոգու կյանք: Հիվանդանոցում բուժվում են շուրջ 50 վարակվածներ: Սինգապուրում արդեն 3-րդ օրը երեխաները դպրոց չեն գնում: Չինաստանի որոշ օջախներում բազմաթիվ վարակվածներ վերցվել են կարանտինի տակ: Ծանր է վիճակը Վիետնամում, որտեղ արձանագրվել է վարակվածների մեծագույն թիվը՝ շուրջ 800 հոգի: Երկու շաբաթվա ընթացքում համաճարակը նշյալ երկրներում ընդհանուր հաշվով խլել է 50 կյանք, 1400 հոգի հիվանդ են: Կանադան անգամ զերծ չի մնացել վարակից: Այստեղ առաջարկվում է օդանավ չընդունել այն մարդկանց, ովքեր գրիպի նշաններ ունեն:

Հիշեցնենք, որ այս սուր թոքաբորբը սկսվում է գրիպի ախտանշաններով՝ բարձր ջերմություն, հազ, աղա՝ շնչառական դժվարություններ:

Համաշխարհային համահայկական կառույցը ձեւավորեց կազմկոմիտե

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Գիտությունների ազգային ակադեմիայում երեկ տեղի ունեցավ համաշխարհային հայկական կառույցի կազմկոմիտեի անդրանիկ նիստը: Նախ եւ առաջ Գիտությունների ազգային ակադեմիայի կողմից Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանին շնորհվեց սօր պատրաստ չէ միանալու եւ որ անհաջողության դեպքում հայ ժողովուրդը կրկին հուսախաբ կլինի:

Արա Աբրահամյանի հավաստմամբ, նման կարծիքներն անհիմն են, քանի որ համահայկական այս կառույցն իր առջեւ դրել է այնպիսի խնդիրներ, որոնց լուծման դեպքում չբախվեն տարբեր կազմակերպու-

ՀՀ ԳԱԱ ոսկե մեդալ՝ հայ գիտնականներին, գիտության ուշադրություն դարձնելու եւ աջակցելու համար: Սա նմանատիպ երկրորդ մեդալն է, առաջինը տրվել է Լուիզ Սիմոն-Մանուկյանին:

Նիստի բացման խոսքում Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանը նշեց, որ նման կազմակերպություն ստեղծելու ժամանակը եկել է: Այս ընթացքում բազմաթիվ կարծիքներ են եղել, թե ժամանակը չէ, թե ժողովուրդն այ-

թյունների եւ կուսակցությունների շահերը:

Պրն Աբրահամյանը կրկին հիշեցրեց նախորդ օրվա ասուլիսում հայտարարած այն հարցերը, որոնցով կզբաղվի համաշխարհային հայկական կազմակերպությունը. հայկական պետականության ամրապնդումն ու զարգացումը, Ցեղասպանության ճանաչումն ու ղարաբաղյան հակամարտության կարգավորումը եւ տնտեսական հարցեր:

Տես էջ 2

Չլսումի պատերազմ անգլո-ամերիկյան ուժերի դեմ

ՄԱԿ-ը հնարկում է «Նավթ անդի դիմաց» ծրագիրը

Քաղդադում օդային ռմբակոծումից սպանվեց 50 խաղաղացի

«Վաշինգտոն փոստ» թերթում ամերիկյան դաշտային հրամանատարներից Դեյվիդ Ուիլիսը երեկ խոստովանում էր, թե ռազմափորձերի ժամանակ իրենք նման բշնամու հետ կռվելու փորձառություն չեն ստացել: Խոսքը վերաբերում է պարտիզանական, կամ ժամանակակից բառով՝ «գերիլա» կռիվներին: Բասրա, Նասիրիա, Սամաուա, Քուտ, Նաջաֆ խաղաների եւ անգամ Բաղդադի մասույցների մոտ իրաքյան կիսազինվորական զորքը, որին իրաքցիները կոչում են «Հուսեյնի ֆիդայիներ», նման կռիվներ է մղում անգլո-ամերիկյան ուժերի դեմ: Նրանց «խփիր ու փախիր» մարտավարությունը ջղայնացնում, նույնիսկ ջլատում է ամերիկյան եւ անգլիական գերազանց, ընտիր ուժերին, որոնք հատկապես գիշերները սփռված են անցկացնել զգոն եւ արթուն, մանավանդ որ նրանց մատակարարման գծի երկարությունը հասնում է 170 կմ-ի:

Ահա թե ինչու ամերիկյան զորքը պատրաստվում է նոր, հուժկու համալրումներ ստանալ ոչ միայն եվրոպայից, այլեւ հայրենիքից: Իրաքյան կողմը, որի նպատակն ամբողջ երկիրը ռազմածակատի գծի վերածելն է, ոչ անտեղի կերպով այժմ հայտարարում է, որ հարձակվող ուժերին դեռեւս չի հաջողվել գրավել իրաքյան որեւէ կարեւոր բնակավայր: Մինչդեռ իրաքյան գլխավոր ուժերը՝ «հանրապետական պահակները», շարունակում են խրամատավորվել Բաղդադի մատույցներում, իրենց սովետական T-72 տանկերը տեղադրել հարմար դիրքերում՝ նախապատրաստվելով վճռական ճակատամարտին:

Երեկ, անգլո-ամերիկյան ուժերի հարձակման 9-րդ օրը, հատուկ տեսարան պարզվեց հարավային Բասրա խաղաի մոտ: Քաղաքն արդեն 7 օր շրջապատած անգլիական ուժերի դեմ-հանդիման եկավ տեղի բնակիչների մի մեծ խումբ՝ շուրջ 2000 հոգի, որ խաղաղ եւ ծարավ՝ հույսը դրել էր անգլիացիների մարդասիրության վրա: Վերջիններս, իրոք, սնունդ եւ ջուր մատակարարեցին նրանց՝ միաժամանակ կռվելով խաղաի պատժաքաղների դեմ: Ըստ անգլիական աղբյուրների, իրենք ռմբակոծում էին նաեւ իրաքցիների այն դիրքերը, որտեղից խաղաից փախչողների վրա կրակ էր բացվում:

Անգլիացիները մտադիր են մարդասիրական օգնություն տրամադրել նաեւ հարավի բնակավայրերի ազգաբնակչությանը, որի համար երեկ Ում Քասրի նավահանգիստ հասավ առաջին բեռնատար նավը: Անգլիացիները ձգտում են ծերբազատվել զավթիչի կերպարից...

Դժվարին վիճակում գտնվող իրաքյան ազգաբնակչությանը մարդասիրական օգնություն տրամադրելու հարցը երեկ քննարկվում էր նաեւ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի ընդլայնված նիստում, որտեղ նախորդ օրը Իրաքի ներկայացուցչի խոսքի ժամանակ Մ. Նահանգների դեսպանը դահլիճից դուրս էր եկել: Քննարկման է դրված 1991 թ.-ից ի վեր կիրառվող «Նավթ սննդի դիմաց» ծրագիրը վերագործարկելու հարցը, այնինչ Իրաքի կառավարությունը, որ միլիարդավոր սառեցված դոլարներ ունի նույնինքն ամերիկյան բանկերում, չի կարող նավթ արտադրել ժողովրդին կերակրելու համար:

Երեկ ուշ ժամին ամերիկյան օդուժի ռմբակոծումից Բաղդադի «Ալ Նուր» հիվանդանոցի մոտ սպանվել է 50 խաղաղացի, ավելի քան 50-ը ծանր վիրավոր է:

Իրաքահայ հոգեւոր առաջնորդը վերադառնում է

ԼՈՆԴՈՆ, 28 ՄԱՐՏ, ՆՈՅԵԱՆ ՏԱՊԱՆ: Իրաքահայ համայնքի հոգեւոր առաջնորդ Ավագ Ասատուրյանը 2-օրյա այցով գտնվում էր Լոնդոնում: Հանդիպելով Քենթբերիի արեւմտիսկոպոս Ռովան Ուիլիըմսի եւ էկումենիկ հարցերով հոգեւորական Ջոնաթան Գուգի հետ՝ նա քննարկել է Իրաքում տիրող իրադրությունը եւ համայնքային խնդիրներին առնչվող հարցեր: Ուիլիըմսը հայ հոգեւորականին է փոխանցել բոլոր եպիսկոպոսներին, այդ թվում եւ իրաքահայերին ուղղված խաղաղության ուղերձը: Նա հավաստել է, որ բանակցում է բրիտանական կառավարության հետ Իրաքի ժողովրդին մարդասիրական օգնության կազմակերպման հարցի առնչությամբ:

Մինչ այդ իրաքահայ առաջնորդը գտնվում էր ԱՄՆ-ում եւ հանդիպել է Նյու Յորքի եւ Չիկագոյի կաթողիկե կարդինալների, Քրիստոնյա եկեղեցիների ազգային խորհրդի անդամների հետ:

Ասատուրյանը Լոնդոնից արդեն մեկնել է Դամասկոս, որտեղից նա կանցնի Բաղդադ:

Մ. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Հրաժարական տվեց Պենտագոնի խորհրդական Ռիչարդ Փեռլը



Ռիչարդ Փեռլը Պենտագոնի «գորշ կարդինալը»: Ամերիկյան «Ջոռնել» պարբերականի խմբագիրներից Ֆիլիպ Թերզյանն իր հերթին նշում է, որ Փեռլն ԱՄՆ պատժաքաղության փոխնախարար Պոլ Վոլֆովիցի հետ Բուշի վարչակարգում թուրքամետ տարր է:

Իրաքի դեմ պատերազմում ԱՄՆ-ի դժվարությունները, ըստ ամենայնի, ակնհայտ են, եւ Փեռլն իբրեւ դրա սանձազերծման գլխավոր պատասխանատու, հրաժարական է ներկայացրել: Այդ մասին մարտի 28-ի առավոտյան հաղորդեց թուրքական հանրային հեռուստատեսությունը: Հաղորդման համաձայն ԱՄՆ պաշտպանության նախարար Դոնալդ Ռամսֆելդը, ընդունելով խորհրդականի պատճառից Փեռլի հրաժարականը, հույս է հայտնել, որ նա կշարունակի իր խորհուրդներով օգնական լինել Պենտագոնին:

Փեռլի հրաժարականը ցույց է տալիս, որ ամերիկյան վարչամեքենայում կլինեն նաեւ այլ հրաժարականներ: Մնում է ենթադրել, որ Անգլիայի վարչապետ Թոնի Բլերն էլ կհետեւվի հրաժարականի պահանջների հետ եւ կհաջորդի Փեռլին: Ի վերջո, նրա հրաժարականի հարցը երկրի օրակարգում է, իսկ Իրաքում ռազմական գործողությունների ընթացքն ամենեւին հուսադրող չէ նաեւ անգլիական զորքերի համար:

ՎԱՀԱՆ ՅԱՆԲՅԱՆ

Աղօրինի ներգաղթյալների առաջին ճամբարն ստեղծվելու է Կուբանում

ԿՐԱՍՆՈԴԱՐ, 28 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ռուսաստանում աղօրինի ներգաղթյալների առաջին ճամբարն ստեղծվելու է Կուբանում: Այդպիսի որոշում է ընդունվել Կրասնոդարի երկրամասի Անվտանգության խորհրդի հերթական աշխատանքային խորհրդակցությունում, որը տեղի է ունեցել երկրամասային վարչակազմի ղեկավար Ալեքսանդր Տկաչովի նախագահությամբ: Անվտանգության խորհրդի անդամները քննարկել են «ՌԴ տարածում օտարերկրյա քաղաքացիների իրավական դրության մասին» օրենքի կատարման ընթացքի վերաբերյալ հարցը: Անվտանգության խորհրդի քարտուղար, փոխնահանգապետ Ալեքսանդր Սիդորենկոն մի քանի թիվ է նշել. աղօրինի ներգաղթի մակարդակը տարեկան կազմում է մինչեւ 250 հազար մարդ այն դեպքում, երբ Կրասնոդարի երկրամասի բնակչության խտությունը վեց անգամ գերազանցում է ռուսաստանյան միջինը: 2002 թվականին Կուբանում գաղթի օրենսդրությունը խախտելու համար պատասխանատվության է ենթարկվել 39 հազար մարդ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության 7,5 հազար քաղաքացիներ, Ուկրաինայի՝ 6 հազար քաղաքացիներ, առանց որեւէ քաղաքացիության՝ 5,6 հազար մարդ: Արդյունքում 448 մարդ արտաքսվել է երկրամասի տարածից, ավելի քան 3 հազարը Կուբանից հեռացել է կամավոր՝ համապատասխան մարմինների հսկողության ներքո:

Քննարկելով իրավիճակը՝ Անվտանգության խորհուրդը որոշում է ընդունել 400 մարդուց բաղկացած երկրամասային գաղթի տեսչություն եւ աղօրինի ներգաղթյալներին ժամանակավոր պահելու համար ճամբարներ ստեղծելու մասին, որոնք, ըստ օրենքի, ենթակա են Կուբանից արտաքսման:

Առաջին այդպիսի ճամբարը, ինչպես գրում է Ռուսաստանի հարավի հայերի «երկրամաս» թերթը, ստեղծվելու է Ադլերի շրջանում, որն այդ առումով ամենաաննբարենպաստներից մեկն է: Այն նախատեսված է վարչական կարգով արտաքսման ենթակա 50-100 օտարերկրյա քաղաքացիների համար: Նման ճամբարներում աղօրինի գաղթյալը կպահվի այնքան ժամանակ, քանի դեռ գործադիր եւ դատական իշխանությունը նրա վերաբերյալ որոշում չեն ընդունի: Իսկ մինչ այդ որոշման ընդունումը աղօրինի գաղթյալը կպոշի բնակարանն մարդկային պայմաններում: Գաղթի հանձնաժողովի աշխատանքի եւ արտաքսման ենթակա գաղթյալների ճամբարների ֆինանսավորումը կատարվելու է երկրամասային բյուջեի միջոցներից:

ԱԶԳ
Քաղաքական

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ

«Անի» ակումբը համալրվեց

Հայաստանի Ռամկավար Ազատական կուսակցության Շենգավիթ համայնքի ակումբներից «Անին» հերթական անգամ համալրվեց: 20 շենգավիթցիներ երդվեցին ավանդական կուսակցության շարքերում ծառայել ազգին եւ հայրենիքին՝ միանալով բազմահազարանոց ռամկավարական ընտանիքին:

Երեկվա նորագիրների հետ հանդիպեցին ՀՌԱԿ փոխատենաղես Մեխակ Գեւորգյանը, Հանրապետական վարչության անդամ Կարեն Կակոյանը: «Անի» ակումբի նորաբաց գրասենյակում տեղի ունեցած հանդիպմանը կուսակցական ընկերները ծանոթացին ընտրություններին վերաբերող հարցեր:

Մեխակ Գեւորգյանի խոսքով, յուրաքանչյուր քաղաքական ուժի գործունեությունն օրենսդիր եւ գործադիր իշխանություններում ներկայացված լինելու դեպքում առավել իմաստավորվում է՝ քաղաքական կարեւոր գործընթացներին մասնակցելու իմաստով, գործընթացներ, որոնց նպատակը երկրի, ժողովրդի բարեկեցությունն է: Այս առումով թեկուզեւ խորհրդարանում ժամանակավորապես չներկայացված կուսակցության գործունեությունն այժմ էլ ակնհայտ է: ՀՌԱԿ փոխատենաղեսի խոսքով, կուսակցությունը խորհրդարան է գնում առանց դաշինքի, սակայն տարբեր ուժերի հետ համագործակցում է:

Նա բերեց Ռուսաստանի հայերի միության հետ հաջող համագործակցության

օրինակը. այս կառույցի հետ լուրջ ծրագրեր են իրականացվում, որոնց արդյունքը աշխատատեղերի տեսքով իրականություն կդառնա:

Մեխակ Գեւորգյանը նշեց, որ կուսակցությունն այսօր առավել քան երբեւէ ուժեղ է, ինչը երեւում է նաեւ ՀՌԱԿ շարքերը համալրողների հանկով: «Անի» ակումբի անդամները փաստում էին, որ իսկապես, կուսակցությունն այսօր հզոր է իր մարդկային ներուժով, կա երկիրը շենացնելու ընդհանուր գործը, որի մեջ էլ իրենց որոշակի դերը սահմանել են ռամկավարները:

Մ. Հ.

Հաստատվեց ՀԼՄ-ներով հարոզչության կարգը

ԿԸՀ հերթական նիստում երեկ որոշ վերախմբագրումներով հաստատվեց Ազ ընտրություններում լրատվամիջոցներով իրականացվելիք նախընտրական քարոզչության կարգը:

Քարոզարշավը կմեկնարկի ապրիլի 21-ին եւ կավարտվի մայիսի 23-ին: Հանրային հեռուստատեսությունը կուսակցություններին եւ դաշինքներին կտրամադրի մինչեւ 60 րոպե անվճար եւ 120 րոպե վճարովի եթերաժամ: Հանրային ռադիոյի դեպքում 120 րոպե անվճար եւ 180 րոպե վճարովի: Հեռուստատեսությամբ քարոզարշավի ժամերն են 18.00-20.30-ը, ռադիոեթերով 14.05-16.00-ը, 21.40-24.00-ը:

Մեծամասնական ընտրակարգով գրանցված թեկնածուները, կուսակցություններն ու դաշինքներն իրավունք ունեն հավասար պայմաններով օգտվել նաեւ մասնավոր հեռուստաընկերությունների եթերաժամից: Իհարկե, ակնկալել, որ իրականում հավասարության այս սկզբունքը պահպանելու հավանականությունը կա, դժվար է: Նույնը դժվար կլինի սպասել նաեւ այլ ՀԼՄ-ներից, բնականաբար, նրանցից յուրաքանչյուրը որեւէ թեկնածուի կամ քաղաքական ուժի առավել նախապատվություն կտա:

ԿԸՀ-ի երեկվա մեկ այլ որոշում ՀՀ նախագահ առաջադրված թեկնածուների նախընտրական հիմնադրամում եղած միջոցների օգտագործման վերաբերյալ ներկայացված հաստատագրերի ամփոփ տվյալները հրապարակելու մասին էր: Ներկայացվեցին 8 թեկնածուների նախընտրական հիմնադրամներում եղած միջոցների մասին տեղեկություններ: Վլադիմիր Դարբինյանն ու Գառնիկ Մարգարյանը նախընտրական հիմնադրամ չեն ձեւավորել: Թեկնածու Արամ Գասպարի Սարգսյանի նախընտրական հիմնադրամ դրամական միջոցներ չեն մուտքագրվել: Ընթերցողին ներկայացնենք տրամադրված տվյալները, որոնց, բնականաբար, պետք է խիստ վերապահումով մոտենալ:

Թեկնածուների անունը, ազգանունը	Սկզբնական մնացորդ	Մուտք	Ելք	Մնացորդ
1	2	3	4	5
		1-ին փուլ		
Ռոբերտ Քոչարյան	0.00	55460800.00	55200800.00	260000.00
Ստեփան Դեմիրճյան	0.00	28922000.00	28922000.00	0.00
Արտաշես Գեղամյան	0.00	28350480.00	27491646.00	858834.00
Արամ Կարապետյան	0.00	30364660.00	30216576.00	148084.00
Վազգեն Մանուկյան	0.00	7812000.00	7812000.00	0.00
Արամ Զ. Սարգսյան	0.00	5836160.00	4834648.00	1001512.00
Արամ Հարությունյան	0.00	1889200.00	1889200.00	0.00
Ռուբեն Ավագյան	0.00	668100.00	668100.00	0.00
		2-րդ փուլ		
Ռոբերտ Քոչարյան	260000.00	11904280.00	12164280.00	0.00
Ստեփան Դեմիրճյան	0.00	2143000.00	2143000.00	0.00

Մ. Հ.

Համաշխարհային համահայկական կառույցը ...

Սկիզբը էջ 1

Խոսելով նման կառույց ստեղծելու գաղափարի իրատեսական լինելու մասին, Ռուսաստանի հայերի միության նախագահը բերեց հենց ՌՀՄ-ի օրինակը: Նշվեց, որ ՌՀՄ-ն իր գործունեությունը ծավալում է ոչ թե անդամավճարների, այլ կոնկրետ բիզնեսից ստացվող եկամուտների հիման վրա: Դա, ըստ Արա Աբրահամյանի, նշանակում է, որ համահայկական ստեղծվելիք կառույցը նույնպես ֆինանսական դժվարություններ չի ունենա, եթե հենվի բիզնեսի վրա:

Արա Աբրահամյանը շնորհակալություն հայտնելով ներկաներին, ասաց, որ հասկանում է այս գաղափարի նկատմամբ թերահավատորեն տրամադրված այն անձանց եւ կազմակերպություններին, որոնք չեն մասնակցում համաշխարհային համահայկական կառույց ստեղծելու աշխատանքներին: Որոշես կազմկոմիտեի անդամներ ներգրավվել էին ներկայացուցիչներ Ռուսաստանի, Բելառուսի, Մոլդովայի, Ուկրաինայի, Ղազախստանի, Ռումինիայի, Էստոնիայի, Վրաստանի, Աջարիայի հայ համայնքների, ինչպես նաեւ Մայր աթոռ Սբ. Էջմիածնի, Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսարանի, Հայաստանի գործերի միության, Ազգային ակադեմիայի, ՀՌԱԿ-ի, սփյուռքի կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Անցնելով կազմկոմիտեի բուն նիստին, ՌՀՄ փոխնախագահ Վլադիմիր Աղայանը նշեց, որ նախածեռնող խմբի երեք ամսվա աշխատանքի ընթացքում ավելի քան 110 կազմակերպություններ են համաձայնել մասնակցել 2003 թ. հոկտեմբերին կայանալիք համահայկական համագումարին: Ընդհանուր առմամբ նշվեց, որ դեռեւս հստակ չէ անվան հարցը, պետության հետ կապված հարաբերությունների բնույթը, դժվար է հայկական տարբեր համայնքների՝ ըստ իրենց կշիռների ներկայացվելու խնդիրը: Ինչպես նաեւ ճշտվեց, թե որտեղ կլինի նման կազմակերպության կենտրոնը եւ ինչ սկզբունքներով կգործի: Արա Աբրահամյանն այս առաջին ճշտման կարգավիճակով նշեց, որ նախնական ծրագրմամբ գրասենյակ կբացվի Էջմիածնում, որտեղ կաշխատի 300 հոգի: Պրն Աբրահամյանը նշեց նաեւ, որ արդեն իսկ այս կազմակերպության ստեղծման համար ներդրվել է մոտ 20 մլն դոլար:

Կազմկոմիտեն ճշտարկեց նաեւ ստեղծվելիք կազմակերպության կանոնադրության նախնական տարբերակը: Որոշվեց, որ նիստում հնչած բոլոր կարծիքները կուսումնասիրվեն, հնարավորինս կընդգրկվեն ստեղծվելիք փաստաթղթերում եւ ճշտարկման կդրվեն կազմկոմիտեի հաջորդ նիստին, որը կլինի մինչեւ հիմնադիր համագումարը:

Հանրահավաքային ելույթներում ոչինչ չի փոխվում

Ժամադրության վայրի նման

Կրկին հանրահավաք էր երեկ: Մատենադարանին հարող հրապարակը բավականին մարդաշատ էր, բայց ոչ մինչեւ կինո «Նաիրի»: Ոգեւորիչ ռիթմերով երաժշտությամբ բազմությանը հիչ զբաղեցնելուց հետո հանրահավաքի կազմակերպիչները սկսեցին իրենց ելույթները: Ըստ էության, գրեթե ոչինչ նոր չէր, ամեն ինչ արդեն բազմիցս ասվել էր, բազմիցս կրկնվել: Մասնավորապես, որ որոշ ՀԼՄ-ներ «ջանք չեն խնայում աղաղակելու, որ ոչ թե իշխանությունն է հակաժողովրդական, այլ ընդդիմությունն է հակաօրենսական», կամ թե «անգամ արդարադատության համակարգը քարոզչություն է իրականացնում»:

Ելույթները մեծ մասամբ կրում էին այնպիսի բնույթ, թե իշխանությունը զավթված է, իշխանության ղեկին գտնվողներն անօրինական են հայտնվել այդտեղ, Ստեփան Դեմիրճյանը ժողովրդի ընտրյալն է: Ելույթ ունեցող Ալբերտ Բազեյանը, Արամ Զ. Սարգսյանը, Արամ Գ. Սարգսյանը, Արամ Կարապետյանը, Ստեփան Դեմիրճյանը նշում էին, որ ընտրությունները կեղծվել են, գործող վարչախումբն աղօրինի է, որ ներկա նախագահին չի օնորհավորել ԱՄՆ-ը, իսկ Ռուսաստանի օնորհավորանքն էլ չի ներկայացվել այնպես, ինչպես իրականում է:

Տիգրան Նաղդալյանի սպանության գործով մեղադրվող Արմեն Սարգսյանի ծնբաքալության մասին հանրահավաքի ժամանակ ասվեց, թե Արմեն Սարգսյանի դեմ կեղծ մեղադրանք է ներկայացվել, իսկ նախորդ օր եթերով հեռարձակված Արմեն Սարգսյանի հարցազրույցը մոնտաժված էր եւ չէր վերաբերում Տիգրան Նաղդալյանի սպանության համար վճարված գումարին:

Եթե հրապարակված հարցազրույցի ժամանակ Արմեն Սարգսյանը խոսում էր պարտքով տրվող կամ մեկ այլ նպատակով հատկացվող գումարից, ապա ինչպե՞ս հասկանալ Հովհաննես Հարությունյանի (Աթերի) այն խոսքերը, համաձայն որոնց, որոշակի պայմանավորվածություններից հետո Գեղամը եկել է զենքերի հետեւից ու սպացել դրանք «SS» եւ «Մակարով»:

Այնուհետեւ Աթերը շարունակում է ցուցմունքում ասել, թե դեկտեմբերի 28-ի երեկոյան իրեն հայտնել են, որ «խփել են»: Իսկ երբ արվածի դիմաց գումար են պահանջել, Աթերը գնացել է Արմեն Սարգսյանենց տուն: Արմեն Սարգսյանն էլ իր ցուցմունքում ասում է, թե ինքը վճարել է սկզբում 25, ապա 40, ավելացրած 35 հազար դոլար: Այսինքն՝ ընդհանուր 75 հազար դոլար:

Ընդհանրապես Տիգրան Նաղդալյանի սպանության եւ դրանում Արմեն Սարգսյանին մեղադրելու հանգամանքներում հետաքրքրական շատ բաներ կան, եւ հասկանալի է, որ այնեն մի խոսք, արտահայտություն կարող է մեկնաբանվել խիստ յուրովի, ընկալվել բազմաստեսակ:

Բայց այս պարագայում անկարելի է երեւակայել, որ Արմեն Սարգսյանը առնվազն չիմանար, թե նման մարդիկ ի՞նչ «բիզնեսի» համար էին այդքան խոշոր գումարներ ուզում իրենից: «Բարեգործությունը» այդ՞ն էր կուրացրել նրան...

Ա. Հ.

Պայմանագրեր ոռոգման ջրօգտագործողների հետ

Ինչպես տեղեկացանք Ջրային տնտեսության պետական կոմիտեի լրատվական ծառայությունից, վերջին 10 օրերի ընթացքում ակտիվացել է ոռոգման ջրի մատակարարման դիմաց առաջացած պարտքերի մարման եւ նոր պայմանագրերի կնքման գործընթացը: Ներկայումս օրական կնքվում է 2125 պայմանագիր, իսկ ոռոգման նոր շրջանն առանց նախորդ տարիների պարտքի կսկսեն պայմանագրեր կնքած ընդհանուր առմամբ 25 հազար ջրօգտագործողներ: Ջրային տնտեսության պետական կոմիտեն վերսին հիշեցնում է, որ պայմանագրերի կնքման վերջնաժամկետն ապրիլի 9-ն է:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Երկուշաբթի՝ մարտի 31-ին, Ազգային ժողովում քվեարկության է դրվելու «Զանգվածային լրատվության մասին» հանրաժողովրդական օրենքի նախագիծը:

Մամուլի ազգային ակումբը վճռականորեն պնդում է՝ «Ո՛չ գրաքննությանը», եւ շարունակում է բողոքի զանգվածային միջոցառումները օրենքի նախագիծը շրջանառությունից հանելու պահանջով:

Ըստ այդմ՝ ՍԱՀ-ն գործընկերներին, խոսքի ազատության կողմնակիցներին հրավիրում է մասնակցելու երկուշաբթի՝ մարտի 31-ին, ժամը 11:30-ին Ազգային ժողովի Բաղրամյան մուտքի մոտ կազմակերպվող բողոքի ակցիային:

ՄԱՄՈՒԼԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿՈՒՄԲ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության 69 տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս: 374-1-562883
e-mail: azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրէն
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՌԱՔԵԼԵԱՆ / հեռ. 529353
Համակարգ. ծառայութիւն
/ հեռ. 582483
Շուրջօրյա լրահավաք ծառայութիւն
/ հեռ. 529353
Apple Macintosh համակարգային շարուածք «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական կամ մասնակի արտատպումները տոյժագիր մանուկի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան, խստիւ արգելւում են, համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

Տնտեսություն

Նոր մետադրամներ մարտի 31-ից

Այդ օրվանից շրջանառության մեջ են դրվում 50, 100, 200 եւ 500 դրամ անվանական արժեւով մետադրամները: Չնայած վաղօրոք դրանց ներդրման ժամկետ էր հայտարարվել հուլիսի 1-ը, բայց ինչպես հայտնեց Կենտրոնական բանկի էմիսիոն գործառնությունների եւ դրամական պահուստների վարչության պետ Գեւորգ Թումանյանը, տնտեսական աճին զուգահեռ ավելացել է նաեւ դրամական զանգվածը, այդ թվում կանխիկ դրամի ծավալները: Հաշվարկված էր, որ վերոնշյալ արժեւի թղթադրամները կսպառվեին մինչեւ հուլիսի 1-ը, բայց դա տեղի ունեցավ ավելի վաղ, ինչն էլ սպիտեց անցնել մետադրամների գործածությանը:

Ինչ վերաբերում է 1993 թ.-ի նմուշի 10, 25, 200 եւ 1998 թ. նմուշի 50 եւ 100 դրամանոց թղթադրամներին, ապա դրանց գործածության ժամկետ է սահմանվել մինչեւ եկող տարվա ապրիլի 1-ը՝ մեկ տարի: Դրանից հետո այդ թղթադրամները դադարում են օրինական վճարամիջոց լինելուց, սակայն հաջորդ մեկ տարվա ընթացքում փոխանակվում են ՀՀ տարածքում գործող բոլոր բանկերում եւ մասնաճյուղերում: 2005 թ. ապրիլի 1-ից հետո արդեն այդ թղթադրամները կփոխանակվեն միայն Կենտրոնական բանկում եւ նրա կողմից լիազորված բանկերում:

Գեւորգ Թումանյանը տեղեկացրեց, որ 1993 թ. նմուշի 50 եւ 100 դրամանոցների համար գործունեության վերջին ժամկետն այս տարվա վերջն է, որովհետեւ 1998 թ., երբ թողարկվեցին նոր նմուշի այդ արժեւով թղթադրամները, հին նմուշերը սկսեցին աստիճանաբար դուրս գալ շրջանառությունից: Այդ ընթացքում նրանք տարբերվում են չափերով, կտիրներով եւ գույներով, արտադրված են Լեհաստանի դրամահատարանում:

Որքա՞ն է տնտեսվում թղթադրամների փոխարեն մետադրամների անցնելիս: Մեր այս հարցին Գեւորգ Թումանյանը պատասխանեց, որ եթե դիտարկենք երկարատեւ՝ 10-15 տարվա ժամկետով, ապա խոսքը մի քանի միլիոն դոլար կազմող գումարի մասին է: Սակայն կոնկրետ թիվ նա չկարողացավ մատնանշել: Նա նշեց նաեւ, որ նոր մետադրամների արտադրության համար հայտարարված մրցույթում ստացվեցին տպասվածից ավելի ցածր գնի առաջարկներ: Դա նույնպես նպաստում է մետադրամների գործածության արդյունավետությանը: Այս առումով ԿԲ ներկայացուցիչն ասաց, որ 20 դրամանոց մետադրամն ինքնարժեքին մոտ է, իսկ 200 կամ 500 դրամանոց մետադրամների անվանական արժեքը մի քանի անգամ գերազանցում է դրանց ինքնարժեքին:

Այս մետադրամները գործածության մեջ դնելով, ըստ Գեւորգ Թումանյանի, շղթան փակվեց: Տեսանելի ապագայում չի բացառվում միայն հոբելյանական մետադրամների թողարկումը: Իսկ «հնարավո՞ր է, որ լինեն նաեւ 1000 դրամ արժեւով մետադրամներ» հարցին էմիսիոն գործառնությունների եւ դրամական պահուստների վարչության պետը պատասխանեց, որ եթե 1000 դրամանոցը համարվի մանր դրամ, դա հնարավոր է: Ընդ որում, պարտադիր չէ, որ դա տեղի ունենա արժեզրկման հետեւանքով: Հնարավոր է, որ դա տեղի ունենա երկրի տնտեսական զարգացման եւ բարեկեցության բարձրացման արդյունքում:

Կեղծ դրամների մասին խոսելով, Գեւորգ Թումանյանը հայտնեց, որ անցյալ տարի նկատվել է կեղծ 500 դրամանոցների հոսք: Նա կոչ արեց զգույշ լինել այդ թղթադրամների հետ, չնայած դրանք որակի առումով բարձր չեն եւ անմիջապես զգացվում է, որ կեղծ են:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Կլինեն 10000 դրամանոցներ

ԿԲ էմիսիոն գործառնությունների եւ դրամական պահուստների վարչության պետ Գեւորգ Թումանյանը տեղեկացրեց, որ արտադրության փուլում է 10000 դրամանոց թղթադրամը, որի վրա պատկերված են լինելու Ավետիք Իսահակյանը եւ դարասկզբի Գյումրին:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Հանրապետության մարզերում ավարտվեցին պարարտանյութի աճուրդ-վաճառքները

Լարվածություն է ստեղծել ազոտական պարարտանյութերի սուղ հանակը

Գարունը կրնկի վրա բացել է գյուղացու հոգսերի դուռը: Եղանակն էլ, իր հերթին, վերջին տարիներին տաճ անակնկալներ է մատուցում՝ մերթ երաշտ, մերթ գերխոնավություն, այս տարի էլ՝ ցրտահարություն: Մասնագետների կարծիքով, ցրտահարված հողն ավելի շատ կարիք ունի պարարտացման ու ոռոգումների:

Հանրապետությունում օգտագործվում է 3 տեսակի պարարտանյութ՝ կալիումական, ֆոսֆորական եւ ազոտական: Կալիումականի ու ֆոսֆորականի ծեռքբերումը խնդիր չէ՝ ագրոհիմիական բազաներում ազատ վաճառքի է ներկայացված շուրջ 8 հազար տ պարարտանյութ: Այս տարի լարվածություն է ստեղծել ազոտական պարարտանյութերի սուղ հանակը: Սրանց ընդհանուր պահանջարկը 100 հազար տոննա է, սակայն եթե նկատի ենք ունենում միայն վճարունակ պահանջարկը, ապա՝ 40 հազար տոննա: Այսօր հանրապետությունում ծաղոնական դրամաշնորհի օգնությամբ հաջողվել է հայթայթել ընդամենը 10 հազար տոննա ազոտական պարարտանյութ: Գյուղացուն հաջ հայտնի է, որ հողի բազմատարր սնուցման, բարձր բերքի երաշխիքը այս 3 տեսակների միատեղ օգտագործումն է, առավել եւս բարձր արդյունքի տալիս է ազոտական պարարտանյութը: Բայց քանի որ շատերի հնարավորությունները չեն ներում 3 տեսակն էլ օգտագործելու համար, գերադասում են ծեռք բերել գոնե առագ եւ ակնհայտ արդյունավետության խոստացող ազոտական պարարտանյութը: Սրա սուղ հանակն այսօր իրացվում է արտագնա աճուրդ-վաճառքների միջոցով:

2 որ առաջ հանրապետության բոլոր մարզերում ավարտվեցին ազոտական պարարտանյութի աճուրդ-վաճառքները: Սակայն միանգամայն իրական մտավախություն կա, որ ազոտական պարարտանյութի այդ նվազ քանակն էլ պետականորեն սահմանված գներով չի հասնի գյուղացուն եւ կրնկին վերավաճառողների ձեռք: Կառավարության որոշմամբ 1 կգ պարարտանյութի գինը սահմանվել է 3050 դրամ, իսկ շուկայում հայտնվում է 4–4,5 հազ. դրամով: ՀՀ գյուղնախարարության սուբսիդավորման աջակցության բաժնի պետ Արամ Միքայելյանի հավաստմամբ, այսօր ամեն ինչ արվում է պարարտանյութի վաճառքն ու իրացումը վերահսկելու համար: Աճուրդներին մասնակցելու իրավունք ունեն միայն տվյալ մարզի բնակիչները: Սովորաբար դրանք լինում են գյուղապետերը, որոնք պարտավորվում են պարարտանյութը վաճառել միայն համայնքի անդամներին: Աղահովության համար յուրաքանչյուր աճուրդի արդյունքները հրապարակվում են մամուլում, այսինքն՝ եթե պարարտանյութը գյուղացուն չհասնի, նա այդ մասին կարող է տեղեկանալ մամուլից: Իհարկե, սա շատ խոցելի միջոց է, եթե նկատի առնենք գյուղացու՝ մամուլի հետ շփվելու սովորույթն ու հնարավորությունները: Ինչեւէ, ազոտական պարարտանյութի ծախ վաճառքը բացառելու խնդիրը նաեւ իրավապահ մարմինների գործն է: Վերջին հաշվով, ցանկության դեպքում, վերավաճառքի դեպքերը հետեւությամբ կարելի է բացառել, քանի որ ներկայացվող պարարտանյութը լիովին տարբերվում է շուկաներում շրջանառվող՝ հիմնականում Վրաստանից ներմուծված պարարտանյութերից ե՛ւ փաթեթավորմամբ, ե՛ւ պիտակավորմամբ, ե՛ւ գույնով:

Առաջներում ազոտական պարարտանյութի խնդիրը հետեւությամբ լուծվում էր տեղում: Սակայն արդեն 10 տարի չի աշխատում Վանաձորի քիմիական գործարանը, իսկ դրա վերագործարկումը, առավել եւս նոր տեխնոլոգիայով ու նոր պահանջների համապատասխան, հսկայական միջոցների հետ է կապվում: Պարարտանյութի դեֆիցիտի խնդիրը լուծելու համար առայժմ այլ միջոցներ են կիրառվում: Արդեն պայմանավորվածություն է ձեռք բերվել Վրաստանի Ռուսթավիի գործարանի հետ՝ տարեկան գոնե 30 հազ. տ պարարտանյութ ներկրելու վերաբերյալ: Սակայն սա էլ խնդրի լուծման արագ ուղի չի ընծում, քանի որ Ռուսթավիի գործարանը, կապիտալ նորոգումների անցկացման պատճառով, դեռեւս չի աշխատում:

Արամ Միքայելյանի հավաստմամբ, ոլորտի մեկ այլ, նույնպես լուծում պահանջող կարեւոր խնդիր է արդեն 10, 20 տարի մարզային պահեստներում սփռված ժամկետանց բուժանյութերից ու դեղանյութերից ազատվելու խնդիրը: Իրենց բաղադրությամբ դրանք միանգամայն վտանգավոր են, եւ չի կարելի թողնել հենց այնպես, բազաներում կուտակված: Դրանց քանակը տասնյակ տոննաների է հասնում: Այժմ դրանք գույքագրվում են, իսկ թե ինչպես կոչնչացվեն, կորոշեն փիմիկոսները:

ԿԱՐՈՆ ՂԱՆԴԻԼՅԱՆ

ԼՂՀ. Օրենքը կձեւավորի հաղթական դաշտը

ԼՂՀ կառավարությունը մշակել է «Կուսակցությունների մասին» օրենքի նախագիծ, որը հավանության է արժանացել կառավարության վերջին նիստում: Այն, հավանական է, շուտով ենթարկման առարկա կդառնա նաեւ խորհրդարանում:

Օրենքի ընդունմամբ՝ ստիճանաբար կհամակարգվի ԼՂՀ քաղաքական դաշտը: Հանրապետության արդարադատության պետական վարչության պետ Ռոբերտ Հայրապետյանի տեղեկացմամբ, Արցախում այսօրվա դրությամբ գրանցված են 14 հասարակական-քաղաքական կազմակերպություններ, որոնցից 7-ը կուսակցություններ են: Չի բացառվում, որ օրենքի ընդունումից հետո դրանց թիվը կնվազի, որովհետեւ օրինագծով նախատեսված՝ կուսակցությունները պարտավոր են ունենալ նվազագույնը 100 անդամ եւ տարածքային մասնաճյուղերի առնվազն մեկ երրորդում: Այս տեսակետից գոյատեւելու իրական հնարավորություն ունեն միայն Արկոմկուսը եւ ՀՅԴ-ն, իսկ ահա Ամենական, Սոցիալ-դեմոկրատական, «Ազատություն», Քրիստոնեա-դեմոկրատական կուսակցությունները երեւի ստիպված կլինեն վերակազմակերպվել կամ էլ լուծարվել, ինչը նաեւ բխում է օրենքի նախագծի պահանջներից: Այն, հավանական է, որոնք բնութագրական են վերոհիշյալ կուսակցությունների գործունեությանը, բնավ հիմք չեն տալիս եզրակացնելու դրանց հետագա միաձուլումը, գոնե այսօրվա դրսեւորումների հաշվարկով:

Բոլոր առումներով ազդեցիկ կուսակցություն դառնալու հնարավորություն ունի «Ժողովրդավարական Արթուն միություն» հասարակական-քաղաքական կազմակերպությունը, որի ակտիվությունն ավելի տեսանելի է առանձնապես 2002 թ. ԼՂՀ նախագահական ընտրություններում:

«Կուսակցությունների մասին» օրենքի նախագիծը ներառում է մի դրույթ, որը ակնարկ է պարունակում հետագայում խորհրդարանական ընտրություններում համամասնական ընտրակարգ մտցնելու վերաբերյալ: Տվյալ դեպքում, հոդված 27-ի երրորդ կետում նշվում է, որ պետբյուջեից կուսակցություններին հատկացվող միջոցները բաշխվում են ԱԺ վերջին ընտրություններում համամասնական ընտրակարգով նրանց ստացած ձայներին համամասնորեն: Բայց քանի որ ԼՂՀ ընտրական օրենսգիրը թույլատրում է սոսկ մեծամասնական ընտրակարգ, ուստի համամասնականի հարցում առայժմ կարող ենք միայն ենթադրություն անել:

Միանգամայն տրամաբանական է թվում, որ ընդամենը 2-3 կուսակցությունների առկայությունը երկրում թույլ կտա անցնել համամասնական ու մեծամասնական ընտրակարգի զուգահեռ կիրառմանը արդեն հաջորդ խորհրդարանական ընտրություններում:

Նախագիծը դեռեւս շրջանառության մեջ չի դրվել խորհրդարանում, բայց, կարծում ենք, էական առարկություններ չի հարուցի ԱԺ-ում քեռեւս այն պատճառով, որ ԼՂՀ խորհրդարանը ընդհանուր խայտաբղետություն չունի: Այսպես անվանված՝ մանր կուսակցությունները չեն կարողանա ազդել ընտրակոմներին, քանի որ նրանց ունեցած ձայնը Ազգային ժողովում սակավաթիվ է: Ըստ կուսակցական տարաբաժանման՝ խորհրդարանում մեկական տեղ ունեն Ամենական եւ Սոցիալ-դեմոկրատական կուսակցությունները, 9 տեղ՝ ՀՅԴ-ն, իսկ մյուս պատգամավորական ձայները, ի բացառյալ 3 անկախ պատգամավորների, պատկանում են ԺԱՄ-ին: Եվ հենց ԺԱՄ խմբակցությանն է վերապահված վերջնական տեսքի բերել «Կուսակցությունների մասին» ԼՂՀ օրենքը:

Համենայն դեպս, ինչ տեսքով էլ օրենքն ընդունվի, կարծում ենք, դրական այն է լինելու, որ ԼՂՀ-ում վերջապես ծեւավորվելու է քաղաքական կայուն դաշտ՝ իր հստակեցված հենակետերով:

Իսկ դա իր հերթին կնպաստի Արցախում իրականացվող ժողովրդավարացման ուղեգծի անխոտոր կայացմանը, ապահովելով նաեւ ներհին քաղաքական կայունությունը:

ԿԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Ստեփանակերտ

Ընտրակալական խոսք

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Հայաստանը հռչակվեց անկախ: Մոտ 12–15 տարիների ընթացքում երեւանում շատ հիմնարկ-ձեռնարկությունների հետ եմ շփվել, դիմել տարբեր հարցերով եւ նկատի առել, թե ինչպիսի մոտեցում ունեն դիմորդների նկատմամբ: Նկատել եմ որոշ աշխատակիցների դիմողի հանդեպ քաղաքավարի, ընկերական, հարգալից, բարի եւ սիրալիր վերաբերմունքը:

Այժմ թերթի միջոցով իմ ընտրակալական խոսքն եմ ուղղում հետեւյալ ընկերներին՝ իրենց մարդկային վերաբերմունքի համար.

1. Սերգեյ Կարապետյան (Երեւան քաղաքի էրեբունու կաղաստրի տնօրեն):
2. Պետրոսյան Ժորա (նույն հիմնարկի աշխատող):
3. Թամարա Սաղաթելյան («Հայմամուլի» գործակալության կադրերի բաժնի պետ):
4. Կախիկյան Կարեն (նույն հիմնարկի պահեստապահ, իր աշխատակազմի հետ):
5. Քոթանջյան Ալեքսանդր (Երեւանի «Ջրմուղ-կոյուղի» վարչության աշխատող, էներգասնուցման հաշվառման բաժնի պետ):
6. Ավագյան Լուսինե (նույն հիմնարկի աշխատող, առեւտրային տնօրենի օգնական):
7. Կ. Սարգսյան («Ջրմուղ-կոյուղի» վարչության տնուգաչափման լաբորատորիայի վարիչ):
8. Ս. Բալգադարյան (տնուգաչափող):
9. Գեւորգ Հակոբյան (էրեբունու ջրմուղի ջրաչափի արտադրամասի պետ) եւ Ժորա Պողոսյան (ջրմուղի աշխատող):
10. Զոհրաբյան Մարտուն (էրեբունու «Ջրմուղ-կոյուղու» տնօրեն):

Նշածս բոլոր ընկերներին ցանկանում եմ առողջություն, երջանկություն, բախտավորություն, ցանկությունների, ծրագրերի եւ իղձերի իրականացում:

ԳՈՒԲԱՐԵՆ ՔԱՔՈՅԱՆ
Մանկավարժ
ՀՊ-ի 2-րդ կարգի հաշմանդամ
Աշխատանքի եւ պատերազմի վետերան

ԱԶԳ Տարածաշրջան

Կարեւոր փաստաթուղթ հետպատերազմյան Իրաքի վերակազմավորման եւ ԱՄՆ-ի հաղթականության վերաբերյալ

ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Դոկտ., պրոֆ., ԳԱԱ Արեւելագիտության ինստիտուտի տնօրեն

Միջազգային հանրությանն այսօր ավելի ու ավելի է մտահոգում այն հարցը, թե ինչ է լինելու Իրաքի հետ ԱՄՆ-ի ռազմական հաղթանակից եւ գրավումից հետո, ինչպիսի հաղաքականություն է վարելու ամերիկյան կառավարությունն Իրաքում եւ Մերձավոր Արեւելքում:

Մասնագետները, չունենալով հավաստի տեղեկատվություն, հարկադրված զբաղվում են կանխագուշակումներով, ձգտելով ըմբռնել ԱՄՆ-ի հաղաքականության տրամաբանությունը եւ ներքին մղիչները:

Կանխագուշակումը կանխագուշակում, սակայն ավելի կարեւոր է իրական եւ հեղինակավոր որեւէ փաստաթղթի գոյությունը, որտեղ հստակ կերպով սահմանված լինեն ամերիկյան հաղաքականության հիմնական նպատակները եւ ուղղություններն Իրաքում Սադդամ Հուսեյնի վարչակարգը տապալելուց հետո: Ամերիկայում մշակված այդպիսի փաստաթուղթ իրոք գոյություն ունի: Դա «Իրաքում ԱՄՆ-ի հետկոնֆլիկտյան հաղաքականության ղեկավար սկզբունքները» փաստաթուղթն է, որը համատեղ նախապատրաստել են ԱՄՆ-ի Ջեյմս Բեյքերի հաղաքականության ինստիտուտը եւ Արտաքին հարաբերությունների խորհուրդը, եւ որը դրվել է պրեզիդենտ Ջորջ Բուշ կրտսերի սեղանի վրա:

Ջեյմս Բեյքերի ինստիտուտը գտնվում է Հյուստոնում (Տեխասի նահանգ): Ջեյմս Բեյքերն ԱՄՆ-ի պետական քարտուղարն էր 1988–1992 թթ., Ջորջ Բուշ ավագի նախագահության շրջանում: Այդ ինստիտուտը ԱՄՆ-ի կարեւոր եւ հեղինակավոր ուղեղային կենտրոններից մեկն է, որտեղ ծնվում եւ մշակվում են նոր գաղափարներ եւ ծրագրեր: Դրանք որպես կանոն ընդունվում են ամերիկյան կառավարության կողմից ի գործադրություն հետեւողականությամբ: Նա տնօրենն է էդվարդ Ջերեջյանը, որը արդի ճանաչված եւ մեծ հեղինակություն ունեցող դիվանագետներից մեկն է:

Արտաքին հարաբերությունների խորհուրդը նույնպես ԱՄՆ-ի հեղինակավոր ուղեղային կենտրոններից մեկն է, որն ակտիվորեն մասնակցում է ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության մշակմանը:

Փաստաթղթի ստեղծման աշխատանքները ղեկավարել են էդվարդ Ջերեջյանը եւ Ֆրանկ Վայզները՝ Արտաքին հարաբերությունների խորհրդից: Նրանց օգնել է մոտ 25 հոգուց բաղկացած աշխատանքային խումբը: Նրա մեջ ներգրավվել են ԱՄՆ-ի ականավոր մասնագետները, այդ թվում Ջեյմս Բեյքերի հաղաքականության ինստիտուտի եւ Արտաքին հարաբերությունների խորհրդի վերլուծաբանները, Պրինստոնի, Վերմոնտի եւ Ելի էլիտար համալսարանների պրոֆեսորները, Վաշինգտոնի Բրուկինգսի եւ Պոտոմակի հաղաքականության ուսումնասիրության ինստիտուտների եւ ԱՄՆ-ի Ռազմածովային քոլեջի մասնագետները, «Բոինգ» ընկերության եւ Քեմբրիջի էներգիայի հետազոտման ընկերակցության ներկայացուցիչները:

Փաստաթուղթը հուշագիր-հանձնարարական է պրեզիդենտ Բուշին եւ նրա կառավարությանը: Փաստաթղթում բառացիորեն ասված է. «Պրեզիդենտ Բուշը եւ նրա ամենաբարձր խորհրդականները պետք է պատրաստ լինեն լուսաբանելու Իրաքի վերաբերյալ իրենց երկարաժամկետ հայեցակարգը: Այդ հայեցակարգը պետք է ներառի հետեւյալը...»: Այնուհետեւ մեկ առ մեկ թվարկվում են այն հիմնական խնդիրները, որոնք կոչված են լուծելու ԱՄՆ-ի պրեզիդենտը եւ նրա թիմը:

Փաստաթղթի ծանոթությունը եւ առանձին հատվածների վերլուծությունը ցույց են տալիս, որ դա ընդգրկում է անվտանգության, Իրաքի վերակառուցման եւ կառավարման, տնտեսության վերականգնման եւ մերձավորարեւելյան աշխարհաքաղաքական տարածաշրջանի առանցքային հիմնախնդիրները, որոնց կիրառումը Բուշի կառավարության կողմից պետք է նոր իրադրություն ստեղծի ինչպես Իրաքում, այնպես էլ տարածաշրջանում, իսկ ավելի լայն առումով՝ աշխարհում:

Հիմնված է այն տեսադրույթի վրա, որ Միացյալ Նահանգները կարող է կորցնել խաղաղությունը, նույնիսկ եթե հաղթի պատերազմում: Առաջին հայացքից հանելուկային թվացող այդ տեսակետը պետք է հասկանալ այն իմաստով, որ եթե Միացյալ Նահանգները չկարողանա գտնել եւ իրականացնել ճիշտ լուծումներ հետպատերազմյան Իրաքի վերակառուցման եւ կառավարման հարցում, ապա նրա ռազմական հաղթանակի արդյունքները կհավասարվեն զրոյի:

Իրաքում Միացյալ Նահանգների կոորդինատորը

Փաստաթուղթը գտնում է, որ պետք է սկսել անվտանգության ապահովման հարցերից, առաջարկելով ծեռնարկել մի շարք կարեւոր քայլեր եւ կատարել նորամուծություններ: Դրանց մեջ, թերեւս, ամենակարեւորը նոր պաշտոն ստեղծելու առաջարկությունն է, որը կոչվելու է Իրաքում ԱՄՆ-ի կոորդինատոր:

Նա ունենալու է վերահսկողական ֆունկցիաներ եւ իրականացնելու է ԱՄՆ-ի նոր ռազմավարությունը անվտանգության, կառավարման եւ տնտեսության բնագավառներում: Մեծ կարեւորություն տալով այդ պաշտոնին, փաստաթղթի հեղինակները գտնում են, որ կոորդինատորի պաշտոնը կարող է գրավել այնպիսի բարձրաստիճան անձնավորություն, որը պետք է վայելի Կոնգրեսի աջակցությունը, լավատեղյակ լինի Միացյալ Նահանգների քաղաքական գործընթացներին եւ ռեգիոնալ խնդիրներին: Նա պետք է վայելի բանակի հարգանքը եւ կարողանա լավ աշխատանքային հարաբերություններ հաստատել ԱՄՆ-ի պետական դեպարտամենտի, պաշտպանության, ֆինանսների եւ այլ նախարարությունների հետ:

Կոորդինատորի առաջնահերթ խնդիրն է լինելու Իրաքում հաստատել կարգ ու կանոն, թույլ չտալ, որ Սադդամ Հուսեյնի վարչակարգի վերացումից հետո երկրում ստեղծվի քաոսային վիճակ, վրիժառության եւ հաշիվներ մաքրելու մթնոլորտ:

Նրա վերահսկողության ներքո պետք է վերացվեն Իրաքի հանրապետական գվարդիան, հատուկ հանրապետական գվարդիան, հետախուզական ծառայությունը եւ արմատախիլ արվեն Սադդամ Հուսեյնի այլ առանցքային ինստիտուտները: Իրաքը պետք է զինաթափվի:

Անվտանգության ապահովման հարցում կարեւոր դերակատարում է վերապահվում իրաքյան բանակին, որը չի վերացվելու, բայց թվաքանակը կրճատվելու է, եւ պետք է հեռացվեն բոլոր այն գեներալները եւ սպաները, որոնք հանցանք են գործել կամ կարեր են ունեցել կառավարող Բաաս կուսակցության հետ: Սաֆրագործումից հետո Իրաքի բանակը, ինչպես նշված է փաստաթղթում, կարող է դառնալ Իրաքի ներքին կայունության եւ ապահովության երաշխավորը:

Փաստաթղթի անվտանգությանը վերաբերող մասում ընդգծվում է նաեւ, որ Միացյալ Նահանգները չպետք է հանդես գա որպես օկուպանտ, եւ տարբերություն պետք է դնել մի կողմից հետպատերազմյան Գերմանիայի եւ Ճապոնիայի, իսկ մյուս կողմից՝ հետսադդամյան Իրաքի միջեւ: Փաստաթղթի հեղինակները գտնում են, որ իրաքցիները ոչ թե պարտություն կրած, այլ ազատագրված ժողովուրդ են:

Նախատեսվում է Իրաքի կոորդինատորի պաշտոնը պահպանել երկու տարի ժամանակով կամ այնքան ժամանակ, որքան կպահանջվի անվտանգության, կառավարման եւ տնտեսական հիմնարար խնդիրները լուծելու համար:

Սխալված չենք լինի, եթե ասենք, որ նա դառնում է Իրաքի անսահմանափակ կառավարողը, թեեւ փաստաթղթում առանձին պարբերությամբ նշված է, որ Միացյալ Նահանգները շատ պարզ կերպով պետք է հայտարարի, որ ցանկություն չունի դառնալու Իրաքի եւ նրա նավթի դե ֆակտո կառավարողը:

Իրաքի կառավարությունը եւ կառավարման համակարգը

Փաստաթղթում մեծ տեղ է հատկացված Իրաքի կառավարման համակարգին, որը պետք է հաստատվի Սադդամ Հուսեյնից հետո: Փաստաթղթի հեղինակները գտնում են, որ այդ հարցը պետք է լուծվի փուլ առ փուլ: Սահմանվում է անցումային շրջան, որի փուլերին համապատասխան ստեղծվում են կառավարման ձեւեր եւ համակարգ:

Նախատեսվում է Իրաքի պատերազմից անմիջապես հետո կամ անցման առաջին շրջանում ստեղծել արտակարգ անցումային կառավարություն, որը պետք է ունենա իրավունք խորհրդականներ: Անցումային երկրորդ փուլում պետք է կազմավորվի միջազգայնորեն եւ ՄԱԿ-ի կողմից վերահսկվող Իրաքի կառավարություն, իսկ երրորդ՝ ավարտական փուլում պետք է ստեղծվի ինքնիշխան Իրաքի կառավարություն:

Այս կապակցությամբ արվում է երկու կարեւոր վերապահում: Հեղինակները գտնում են, որ չպետք է գայթակղության ենթարկվել եւ կառավարություն կազմել, ճանի դեռ չեն ավարտվել պատերազմական գործողությունները: Նրանք խորհուրդ են տալիս այդ փուլին դիմել միայն պատերազմի ավարտից հետո: Նրանք նաեւ նախազգուշացնում են Բուշին, որ հետպատերազմյան շրջանում, կոնֆլիկտի լուծումից հետո, կառավարություն կազմելիս, քույլ չտա, որ կառավարության կազմում տիրապետող լինի արտասահմանում գտնվող իրաքյան ընդդիմությունը: Նրանք չեն ժխտում ընդդիմության դերակատարումը, բայց գտնում են, որ նրա ծայնը պետք է համարվի կարեւոր ծայներից մեկը այլ ծայների մեջ եւ ոչ ավելին:

Առաջարկվում է Բաղդադում եւ Իրաքի մյուս նահանգներում ստեղծել խորհրդակցական խորհուրդներ, որոնք պետք է կազմված լինեն իրաքյան ղեկավարներից՝ ազգային եւ շրջանային մակարդակներով, ընդգրկելով դրանցում նաեւ ամսորում գտնվող ընդդիմության ներկայացուցիչներին: Նահանգային խորհուրդների խնդիրների մեջ է մտնում օգնել զինվորական հրամանատարներին հասկանալու իրադրությունը եւ պայմանները տեղերում, լուծել բնակչությանը հուզող եւ վիճելի հարցերը տեղական մակարդակներով: Այս ամբողջ գործընթացը պետք է կատարվի ամերիկացիների նախաձեռնությամբ, Իրաքում ԱՄՆ-ի կոորդինատորի եւ այլ պաշտոնյաների վերահսկողության ներքո:

Անցումային շրջանի ավարտին պետք է ընդունվի նոր սահմանադրություն, անցկացվեն ընտրություններ եւ Իրաքի ժողովուրդն իրավունք ձեռք կբերի ընտրել իր սեփական պառլամենտը եւ կառավարությունը:

Իրաքի վերակազմավորումը դաշնակցային (ֆեդերալ) պետության

Ինչպիսի՞ն է լինելու Իրաքի՝ որպես պետության պաղագան եւ ծակատագիրը: Հեղինակները գտնում են, որ ԱՄՆ-ի ազգային շահերին լրիվ համապատասխանում է գրավել հատատուն դիրք Իրաքի տարածքային ամբողջականության պահպանման հարցում եւ մերժել բոլոր այլ տեսակի լուծումները, անգամ եթե դա կնշանակի դրական եւ թուրքական ծրագրերի ձախողում:

Իրաքը պետք է դառնա ֆեդերատիվ պետություն, ըստ որում ոչ թե էթնիկական եւ կրոնական, անկլավային, այլ շրջանային եւ նահանգային մակարդակներով, խարսխված Իրաքի միասնականության եւ տարածքային ամբողջականության պահպանման սկզբունքի վրա:

Իրաքի տնտեսական վերականգնումը

Իրաքի տնտեսական վերականգնման հարցերը նույնպես իրենց արժանի տեղն են գտել փաստաթղթում, որի համար նրա հեղինակները առաջարկում են իրենց դեղատոմսը:

Նախատեսվում է սկսել Իրաքի նավթարդյունաբերության վերականգնումից: Հաշվարկված է, որ նավթարդյունաբերությունը մինչեւ 1990 թ. Պարսից ծոցի պատերազմը եղած մակարդակին բարձրացնելու համար կպահանջվի 18–36 ամիս եւ 5 մլրդ դոլար: Իսկ ամբողջ տնտեսության վերականգնման համար կպահանջվի 25–100 մլրդ դոլար:

Որտեղի՞ց գտնել այդ անհրաժեշտ գումարը: Առաջարկվում է մի մասը ծածկել իրաքյան նավթից ստացվող շահույթներից, մի մասն էլ Համաշխարհային բանկի, ԱՄՆ-ի եւ արեւմտյան ներդնողների օգնությամբ: Բայց հարձակումը տրավմա կառաջացնի ամբողջ մուսուլմանական աշխարհում, եւ հատկապես արաբական աշխարհում: Հեղինակները անդրադառնում են նաեւ արաբա-իսրայելական կոնֆլիկտին, համարելով դա ամենամեծ բացթողումն ԱՄՆ-ի քաղաքականության մեջ: Ուստի նրանք առաջարկում են Բուշին ամենաակտիվ կերպով, ուղղակիորեն, ամենաբարձր մակարդակով, օգտագործելով իր առաջնորդ լինելու հանգամանքը, զբաղվել արաբա-իսրայելական հարցի կարգավորմամբ, համարելով դա էական ԱՄՆ-ի համար:

Մյուս բարդ հիմնախնդիրը համարվում է Հյուսիսային Իրաքի հարցը: Փաստաթղթում դա դիտարկվում է անկախ քրդական պետություն ստեղծելու եւ քուրդ-թուրքական հարաբերությունների համատեքստում: Նշվում է, որ քրդական անկախ պետություն ստեղծելու հեռանկարը կարող է հարուցել թուրքական ռազմական ինտերվենցիա: Իսկ դա, ինչպես երեւում է, ձեռնտու չէ ԱՄՆ-ին, հետեւաբար նա չի կարող թույլ տալ, որ դեպքերն այդ ուղղությամբ զարգանան: Հեղինակներն առաջարկում են ամերիկյան ղեկավարությանը հակադրվել ինչպես քրդերի, այնպես էլ թուրքերի հավակնություններին եւ հավատարիմ մնալ Իրաքի տարածքային ամբողջականությանը: Դրանից հետեւում է, որ ԱՄՆ-ը, օգտագործելով եւ քրդերին, եւ թուրքերին, պատրաստ չէ նրանց այնպիսի զիջումներ անել, որոնք հակասում են իր շահերին:

Փաստաթղթում հատուկ ընդգծման առարկա է դարձել ամերիկա-իրանական հարաբերությունների հարցը: Դրան ներկա պահին տրվում է հատուկ նշանակություն: Նշվում է, որ Իրաքի դեպքում կա բավարար հիմք ամերիկա-իրանական խաղաղ համագործակցության համար, հաշվի առնելով նաեւ այն հանգամանքը, որ ԱՄՆ-ն ի վիճակի է վերացնել իրանցիների վախը եւ մտահոգությունն Իրանը շրջապատելու եւ նրա ներքին գործերին միջամտելու վերաբերյալ:

Վերջապես առաջարկվում է ստեղծել մի ժամանակավոր մեխանիզմ, որը, Իրաքի հարեւան երկրների հետ խորհրդակցելու ուղիով, կօգնի ջրի երես հանել նրանց տարածաշրջանային մտահոգությունները եւ սահմանել համագործակցության հնարավոր ասպարեզները:

Մեր կարծիքով, այս բաժնում ընդգրկվող խնդիրներն, ըստ էության, կազմում են Մեծ Մերձավոր Արեւելքի ծրագրի ամենաէական տարրերը:

Ահա այսպիսին է ընդհանուր գծերով Իրաքի խնդրի կարգավորման ամերիկյան հայեցակարգը: Եվ դատելով ծավալվող գործընթացներից, Բուշի կառավարությունն ընդհանուր առմամբ հետեւում է դրա հիմնադրույթներին: Իսկ դա գալիս է հաստատելու այն տեսակետի ճշմարտացիությունը, որ ԱՄՆ-ը, Իրաքի վրա հարձակումով իրականացնում է աշխարհի միակ ղեկավարը լինելու իր գլոբալ ռազմավարությունը:

Իրաք են բերվում ամերիկյան նոր զորեր

Ավերվել է Բաղդադի միջազգային հեռախոսակայանը

Պենտագոնի ներկայացուցիչները հայտարարել են, որ ապրիլին Իրաքում ամերիկյան զորերի թվակազմը գրեթե կրկնապատկվելու է՝ հասնելով 200-225 հազարի: Ռոյթեր գործակալության տվյալներով, ներկայումս այնտեղ ամերիկացի եւ բրիտանացի զինծառայողների թիվը մոտ 125 հազար է:

Հինգշաբթի երեկոյան Ֆորտ Հուդի ռազմակայանից արդեն սկսվել է 4-րդ հետեւակային դիվիզիայի տեղափոխությունը, որը համարվում է ամերիկյան բանակի առավել լավ հանդերձավորված եւ պատրաստված զորամասերից մեկը: Քուվեյթ կհասցվեն դիվիզիայի 30 հազար մարտիկներ, ներառյալ տեխնիկական անձնակազմը: Զրահատեխնիկան եւ զինամթերքն արդեն իսկ Քուվեյթում են:

Գերմանիայի ռազմակայաններից սկսվել է ԱՄՆ 1-ին զրահատանկային դիվիզիայի մոտ 20 հազար զինծառայողների տեղափոխությունը: Այսօր սկսվելու է Ֆորտ Քոլինզի (Կոլորադոյի նահանգ) 2-րդ հետախուզական գնդի տեղափոխումը:

Պենտագոնի անանուն ներկայացուցիչն ընդգծել է, որ զորաբաժնի ավելացման որոշումն ընդունվել է նախօրոք կազմված ծրագրի շրջանակներում եւ կապված չէ հակաիրաքյան կոալիցիայի զորերի ներկայիս դժվարությունների հետ:

Ինչ վերաբերում է բուն ռազմական գործողություններին, նախորդ գիշեր սաստիկ ռմբակոծումների է ենթարկվել Իրաքի մայրաքաղաքը: Մասնավորապես հարվածներ են հասցվել տեղեկատվության, պլանավորման նախարարությունների եւ արտգործնախարարության մերձակա տարածքներին: Վաղ առավոտյան հերթական ռմբակոծությունից ավերվել են Բաղդադի կապի օբյեկտները, այդ թվում միջազգային հեռախոսակայանը:

Պենտագոնը հաղորդել է, որ Նասիրիայի մոտ մղված մարտերի ընթացքում անհետ կորել են 12 ծովային հետեւակայիններ, 14 ուրիշներ էլ վիրավորվել են: Ամերիկացիների կարծիքով, Սադդամ Հուսեյնը ողջ է եւ իր բանակի գործողությունները վերահսկում է Բաղդադի գետնուղիների համակարգից, որը կապում է նրա բունկերները:

Բաղդադի մատույցներում տեղաբախված ամերիկացի զինվորներին երեկ առաջին անգամ տաք կերակուր են տվել: Մինչ այդ 3-րդ դիվիզիայի զինվորները սնվում էին պատրաստի օրապահիկով: Քաթարի «Ալ Ջազիրա» հեռուստաընկերության կարծիքով, Սադդամ Հուսեյնը ողջ է եւ իր բանակի գործողությունները վերահսկում է Բաղդադի գետնուղիների համակարգից, որը կապում է նրա բունկերները:

Բաղդադի մատույցներում տեղաբախված ամերիկացի զինվորներին երեկ առաջին անգամ տաք կերակուր են տվել: Մինչ այդ 3-րդ դիվիզիայի զինվորները սնվում էին պատրաստի օրապահիկով: Քաթարի «Ալ Ջազիրա» հեռուստաընկերության կարծիքով, Սադդամ Հուսեյնը ողջ է եւ իր բանակի գործողությունները վերահսկում է Բաղդադի գետնուղիների համակարգից, որը կապում է նրա բունկերները:

Հաղորդվում է նաեւ, որ ամերիկացի զինվորները սկսել են Իրաք թափանցել Հորդանանի տարածից: Երեկ Ամմանում անցկացվեց Իրաքի պատերազմի դեմ ուղղված ցույց: ԱՄՆ-ի դաշնակից Հորդանանի իշխանությունները դժվար կացության մեջ են հորդանանցիների հակապատերազմական տրամադրությունների պատճառով:

ԱՄՆ զինվորական հրամանատարության աբխարհազորայիններ են:

Հաղորդվում է նաեւ, որ ամերիկացի զինվորները սկսել են Իրաք թափանցել Հորդանանի տարածից: Երեկ Ամմանում անցկացվեց Իրաքի պատերազմի դեմ ուղղված ցույց: ԱՄՆ-ի դաշնակից Հորդանանի իշխանությունները դժվար կացության մեջ են հորդանանցիների հակապատերազմական տրամադրությունների պատճառով:

ԱՄՆ զինվորական հրամանատարության աբխարհազորայիններ են:

AP

Քուրդ մարտիկները մոտեցել են Քիրքուքին

Իրաքի հյուսիսում երկրորդ ճակատի բացումն ակտիվացրել է հրդեհի գործողությունները: Երեկ հրդեհի զինվորական աղբյուրները նշել են, որ հուրդ մարտիկները զգալի առաջխաղացում են կատարել եւ նավթառաս շրջանի ռազմավարական կենտրոն Քիրքուք քաղաքից 20 կմ-ի վրա են:

Քրդստանի հայրենասիրական միության (ՔՀՄ) մարտիկները Ֆրանսոյեսի թղթակցին հայտնել են, որ իրաքյան զորերի ականապատված գոտին մաքրելուց հետո իրենք մտել են Քարա Անջիր բնակավայր: Իրաքի բանակը լքել է նախկին դիրքերն ամերիկյան օդուժի երկու հարձակումներից հետո:

Ֆրանսոյեսի տվյալներով, երեկ գիշեր իրաքյան Քրդստանի տարածքում ամերիկյան օդանավերից իջեցվել են տասնյակ զրահամեքենաներ: Զինվոր եւ բեռնատարներ են կուտակվել Էրբիլից հյուսիս-արեւելք գտնվող Հարիրի փոքրիկ օդանավակայանի թռիչքուղու մոտ, որտեղ վայրէջք է կատարել 4 ուղղաթիռ: «Ազգը» երեկ տեղեկացրեց հյուսիսային Իրաքի հրդեհի կարծիքով, Սադդամ Հուսեյնը ողջ է եւ իր բանակի գործողությունները վերահսկում է Բաղդադի գետնուղիների համակարգից, որը կապում է նրա բունկերները:

Բաղդադի մատույցներում տեղաբախված ամերիկացի զինվորներին երեկ առաջին անգամ տաք կերակուր են տվել: Մինչ այդ 3-րդ դիվիզիայի զինվորները սնվում էին պատրաստի օրապահիկով: Քաթարի «Ալ Ջազիրա» հեռուստաընկերության կարծիքով, Սադդամ Հուսեյնը ողջ է եւ իր բանակի գործողությունները վերահսկում է Բաղդադի գետնուղիների համակարգից, որը կապում է նրա բունկերները:

Հաղորդվում է նաեւ, որ ամերիկացի զինվորները սկսել են Իրաք թափանցել Հորդանանի տարածից: Երեկ Ամմանում անցկացվեց Իրաքի պատերազմի դեմ ուղղված ցույց: ԱՄՆ-ի դաշնակից Հորդանանի իշխանությունները դժվար կացության մեջ են հորդանանցիների հակապատերազմական տրամադրությունների պատճառով:

ԱՄՆ զինվորական հրամանատարության աբխարհազորայիններ են:

Հաղորդվում է նաեւ, որ ամերիկացի զինվորները սկսել են Իրաք թափանցել Հորդանանի տարածից: Երեկ Ամմանում անցկացվեց Իրաքի պատերազմի դեմ ուղղված ցույց: ԱՄՆ-ի դաշնակից Հորդանանի իշխանությունները դժվար կացության մեջ են հորդանանցիների հակապատերազմական տրամադրությունների պատճառով:

ԱՄՆ զինվորական հրամանատարության աբխարհազորայիններ են:

Քրդստանի հայրենասիրական միության (ՔՀՄ) մարտիկները Ֆրանսոյեսի թղթակցին հայտնել են, որ իրաքյան զորերի ականապատված գոտին մաքրելուց հետո իրենք մտել են Քարա Անջիր բնակավայր: Իրաքի բանակը լքել է նախկին դիրքերն ամերիկյան օդուժի երկու հարձակումներից հետո:

Ֆրանսոյեսի տվյալներով, երեկ գիշեր իրաքյան Քրդստանի տարածքում ամերիկյան օդանավերից իջեցվել են տասնյակ զրահամեքենաներ: Զինվոր եւ բեռնատարներ են կուտակվել Էրբիլից հյուսիս-արեւելք գտնվող Հարիրի փոքրիկ օդանավակայանի թռիչքուղու մոտ, որտեղ վայրէջք է կատարել 4 ուղղաթիռ: «Ազգը» երեկ տեղեկացրեց հյուսիսային Իրաքի հրդեհի

ջաններում ամերիկացի 1000 դեսանտայինների իջեցման մասին: Ըստ Ֆրանսոյեսի, նրանք ներկայումս տեղաբաշխված են Քրդստանի 4 օդանավակայաններից մեկի՝ Հարիրի օդանավակայանի թռիչքադաշտի շուրջը, զինված են M 4 հրաձիգներով ու գնդացիրներով եւ նոր ուժերի են սպասում Բաղդադի վրա լայն հարձակում ձեռնարկելու համար:

Պ. Ք.

ՀԱԿԻՐՃ

Ըստ անգլիական թերթի, Հուսեյնն ուզում է փախչել Սիրիա

Բրիտանական «Դեյլի թելեգրաֆ» թերթի ոմնդման համաձայն, Իրաքի նախագահ Սադդամ Հուսեյնը պատրաստվում է փախչել Սիրիա: Թերթն ստացել է տեղեկություններ, թե Հուսեյնը վաճառում է իր կալվածքները եւ թանկարժեք իրերը, որպեսզի բավականաչափ դրամ ունենա տարագրության մեջ ապրելու համար: Անձնական ինքնաթիռը պատրաստ է ամեն պահի նրան Իրաքից դուրս բերել: Իրաքի բարձրագույն ղեկավարների ընտանիքներն արդեն իսկ Սիրիայում են: Թերթի լրագրողների տվյալներով, Իրաքի պատերազմն սկսվելուց մի քանի որ առաջ Հուսեյնի առաջին կինը՝ Սաջիդան, Դամասկոս է մեկնել շարժական կայքով լի 3 բեռնատարների եւ 60 թիկնապահների ուղեկցությամբ: Դամասկոսում է նաեւ փոխվարչապետ Թարիք Ազիզի ընտանիքը:

ԱՄՆ-ի զորերը նոր խոշոր ռազմական գործողություն են սկսել Աֆղանստանում

ԱԲՈՒ ԴԱԲԻ, 28 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ամերիկյան զորերն Աֆղանստանում օդուժի աջակցությամբ վերջին օրերի ընթացքում երկրորդ լայնածավալ գործողությունն են սկսել երկրի հյուսիսարեւելյան լեռնային շրջանում, այսօր հայտարարել է Քաբուլի մերձակա Բաղրամի ավիահանգրվանում ԱՄՆ-ի բանակի ներկայացուցիչը: «Անպատի առյուծ» գործողությունը հետեւել է այն բանից հետո, երբ հարյուրավոր ամերիկացի զինվորներ անցյալ շաբաթ Ղանդահարի նահանգում «խորհակիչ հարված» գործողության ընթացքում որոնում էին թալիբներին ու նրանց կողմնակիցներին: Այն ժամանակ ծերբակալվեցին մի քանի գրհայիններ եւ հայտնաբերվեցին զենքի ու զինամթերքի պահեստներ: Հինգշաբթի օրն սկսված «Անպատի առյուծ» գործողությանը մասնակցում են ամերիկյան պարաշյուտիստների 505-րդ գումարտակի զինծառայողները: Նրանք արդեն հրթիռների ու ականների երկու խոշոր պահեստ են հայտնաբերել:

Ճապոնիան լրտեսական 2 արբանյակ է արձակել

Իր պատմության մեջ առաջին անգամ Ճապոնիան երեկ արձակել է հետախուզական երկու արբանյակ: Ռոյթեր գործակալությունը հաղորդում է, որ Տանեգասիմա կղզու տիեզերադաշտից դրանք ուղեծիր է դուրս բերել H-2A տիպի մի հրթիռ: Նախնական հաղորդումների համաձայն, արբանյակները հաջողությամբ անջատվել են տանող հրթիռից, սակայն առաջին տեղեկատվությունը տալու են մի քանի ամիս հետո միայն: Լրտեսական երկու արբանյակների արձակման նպատակը Հյուսիսային Կորեայի նկատմամբ վերահսկողության հաստատումն է եւ մասնավորապես նրա հրթիռային ծրագրի եւ միջուկային մշակումների վերաբերյալ տեղեկատվության ստացումը: Արբանյակներից մեկը դիտարկելու եւ լուսանկարելու է ԿԺԴՀ-ի տարածքը, իսկ երկրորդը հանդերձավորված է ռադարով:

2002 թ. աշխարհում զոհվել են 76 եւ ձերբակալվել 143 իրավապաշտպաններ

Իրավապաշտպաններն ամենուրեք ընդունում են մարդկանց անհետացումների եւ կոտտանների փաստերը, դատապարտում մարդու իրավունքների խախտումները: Բայց հաճախ դա արվում է հենց իրավապաշտպանների կյանքի եւ ազատության գնով: Դրա վկայությունն Իրավապաշտպանների պաշտպանության դիտարանի հրապարակած հերթական ամենամյա զեկուցագիրն է:

Փաստաթղթի տվյալներով, 2002 թ. աշխարհի տարբեր երկրներում սպանվել կամ անհետ կորել են 76 իրավապաշտպաններ, իսկ 143-ն էլ կամայականորեն ձերբակալվել, դատապարտվել եւ բանտարկվել են, երբեմն էլ խոշտանգումների ենթարկվել:

Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի (Փարիզ) եւ հակակոռուպցիայի համաշխարհային կազմակերպության (ժնեւ) ջանքերով ստեղծված Իրավապաշտպանների պաշտպանության դիտարանը նաեւ բացահայտել է, որ առնվազն 267 իրավապաշտպաններ եւ իրավապաշտպանական ընկերակցություններ ենթակա են դարձել սպառնալիքների եւ վարկաբեկման քարոզարշավների:

«Լիբերասիոն» թերթը նշում է, որ 2001 թ. սեպտեմբերի 11-ից հետո հակաահաբեկչական պայքարը պատրվակ դարձնելով, շատ պետությունների ղեկավարներ սկսեցին այն ծառայեցնել իրենց իշխանության ամրապնդմանը՝ ի վնաս մարդու իրավունքների ասպարեզում իրենց ստանձնած պարտավորությունների: Դիտարանի զեկուցագրում որպես ապացույց բերված են մասնավորապես Ուզբեկստանի, Ռուսաստանի, Եգիպտոսի եւ Մալայզիայի անունները, որոնք «սեպտեմբերի 11-ի դեպքերն օգտագործեցին բռնություններն օրինականացնելու կամ խստացնելու նպատակով, հաճախ՝ Արեւմուտքի երկրների կառավարությունների խրախուսմամբ եւ օրհնությամբ»:

Փաստաթղթի հեղինակներն ընդգծում են, որ աշխարհի 80 երկրներում իրավապաշտպանական գործունեությունը կարված է որոշակի վտանգներ հետ: Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի նախագահ Սիդիկի Կաբայի գնահատմամբ, 2002թ. «ծանր տարի էր մարդու իրավունքների եւ իրավապաշտպանների համար»: 2003 թ. արդեն «ավելի է ընկել» Իրաքի դեմ ծեռնարկված պատերազմով, որը կարող է էլ ավելի վատթարացնել մարդու իրավունքների ասպարեզում տիրող իրավիճակը:

Ռ. Պ.

Փարիզում ձերբակալվել են ռուս կախարդներ

Ֆրանսիայում ձերբակալվել են երկու ռուս կախարդներ, որոնք վերահսկում էին մոտ հարյուր պոռնիկների աշխատանքը: Ընդհատակյա ցանցի բացահայտման գործողությունները թերեւս խոշորագույնն էին վերջին 20 տարում: «Պարիզիեն» թերթն այդ կախարդներին անվանում է «ռուս մաֆիականներ»:

Թերթի տվյալներով, նրանք աղջիկներ են բերել Ռուսաստանից, Ուկրաինայից եւ Լիտվայից, նրանց սպիտելով «սպասարկել բարձրաստիճան հաճախորդների», մասնավորապես Ֆրանսիացի ձեռնարկատերերի, որոնք կարող են վճարել 200-800 եվրո: Տեսակցությունները նշանակվել են Փարիզի 15-րդ եւ 17-րդ շրջանների շքեղ բնակարաններում:

Ընդհատակյա ցանցի աղջիկները Ֆրանսիա էին գալիս եռամսյա այցագրերով, ուստի աշխատողների կազմը հաճախ էր փոխվում: «Տերերը» հսկում էին, որ հանկարծ տեղեկությունների արտահոսք տեղի չունենա:

Ոստիկանները հայտնաբերել են ռուսերեն գրված «ներքին կարգուկանոնի» պահանջները, որոնց համաձայն պոռնիկները «պարտավոր են իրենց մոտ ունենալ հեռախոս, հագնվել հաճախորդի պրոֆիլին համապատասխան, անմիջապես վարձ պահանջել եւ զգուշանալ կեղծ թղթադրամներից»:

Ընդհատակյա ցանցի բացահայտման գործում Ֆրանսիացիներին օգնել են Ռուսաստանի իրավապահ մարմինները: «Պարիզիենի» տվյալներով, ձերբակալվածները Ռուսաստանում զբաղվել են փողերի լվացմամբ:

Ֆրանսիայի օրենսդրության համաձայն, պոռնկությունն օրենքով չի հետապնդվում, բայց կավատությունը հրեաորեն պատժելի հանցագործություն է:

■ Լավագույն կինոնկար. «Չիկագո» («Միրամաքս» կինոընկերություն, պրոդյուսեր՝ Մարշին Ռիչարդս, ռեժիսոր՝ Ռոբ Մարշալ)

■ Լավագույն ռեժիսորական աշխատանք. Ռոման Պոլանսկի («Դաշնակահարը», Լեհաստան - Ֆրանսիա)

■ Լավագույն դերասան. Ադրիեն Բրոուդի («Դաշնակահարը»)

Լավագույն դերասանուհի. Նիկոլ Քիդման («Ժամեր»)

(«8-րդ մղոնը», երաժշտությունը՝ էմինեմի, Ջեֆ Բեսի, Լուիս Ռեսոյի, խոսքերը՝ էմինեմի)

■ Լավագույն գրիմ. Ջոն Ջեքսոն, Բեատրիս Դե Ալբա («Ֆրիդա»)

■ Լավագույն մոնտաժ. Մարշին Ուոլշ («Չիկագո»)

■ Լավագույն տեսողական էֆեկտներ. Ջիմ Ռայգիլ, Ջո Լեսթրի, Ռենդոլ Ուիլյամ Քուք, Ալեխս Ֆանմի («Մասաճիների տիրակալը. Երկու ամրոց»)

վեստում ներդրած ավանդի համար. Փիթեր Օ'Թուլ

■ Լավագույն լիամետրաժ մուլտիպլիկացիոն կինոնկար. «Ոգիներից գեղվածները», ռեժիսոր՝ Հայաո Միյածակի, Ճապոնիա

■ Լավագույն կարճամետրաժ մուլտիպլիկացիոն կինոնկար. «The Chubbchubbs»

■ Լավագույն վավերագրական կինոնկար. «Բոուլինգ Կոլումբինայի

«ՕՍԿԱՐԻ» ՆՈՐ ՏԵՐԵՐԸ

■ Երկրորդական դերի լավագույն դերասան. Քրիս Քուփեր («Էկրանավորում»)

■ Երկրորդական դերի լավագույն դերասանուհի. Քեթրին Զիտա - Ջոնս («Չիկագո»)

■ Լավագույն բնօրինակ սցենար. Պեդրո Ալմոդովար («Խոսիր նրա հետ», Իսպանիա)

■ Լավագույն էկրանավորման սցենար. Ռոնալդ Հարվուդ («Դաշնակահարը»)

■ Լավագույն օպերատորական աշխատանք. Կոնրադ Լ. Հոլ («Նզովյալ ուղի»)

■ Լավագույն արտասահմանյան կինոնկար. «Ինչ-որ տեղ Աֆրիկայում», ռեժիսոր՝ Կարլին Լինք, Գերմանիա

■ Լավագույն երաժշտություն ֆիլմի համար. Էլիոթ Գոլդենթալ («Ֆրիդա»)

■ Լավագույն նկարչական ձեւավորում. Ջոն Մայր, Գորդ Սիմ («Չիկագո»)

■ Լավագույն զգեստներ. Քոլին Էթվուդ («Չիկագո»)

■ Լավագույն երգ. «Lose Yourself»

Քեթրին Զիտա-Ջոնսը «Չիկագո» ֆիլմում

■ Լավագույն հնչյունավորում. Մայլլ Միներներ, Դոմինիկ Տավելլա, Դեյվիդ Լի («Չիկագո»)

■ Հնչյունային էֆեկտների լավագույն մոնտաժ. Իթան վան դեր Ռին, Մայլլ Հուիհինս («Մասաճիների տիրակալը. Երկու ամրոց»)

■ Պատվավոր «Օսկար» կինոարտահամար», ռեժիսոր՝ Մայլլ Մուր

■ Լավագույն կարճամետրաժ վավերագրական կինոնկար. «Ձույգ աշխարակներ»

■ Լավագույն կարճամետրաժ կինոնկար. «Այս հմայիչ մարդը»:

Դոփաթարի անհրաժեշտությունը

Հոլիվուդի ոսկեդարում ընդունված էր, որ «մյուզիքլը ամերիկացու կենսախինդ հոգու դոփաթարն է»: Այդ խայտող հոգին Ֆրեդ Աստերի պես անխոնջ էր, եւ «Չիկագո» հոչակավոր վոդեւիլը, որ ծնվել է 20-ականներին լրագրող Մորին Դալաս-Ուոթֆինսի գրած «Խիզախ փոխրիկը» պիեսից, Հոլիվուդը երկու անգամ էկրանավորել է՝ 1926-ին եւ 1942-ին: Ռոբ Մարշալի նոր տարբերակը Ջոն Քանդերի

Նիկոլ Քիդման

երաժշտությամբ եւ Ֆրեդ Էբի խոսքերով Բոբ Ֆոսիի բեմադրած լեգենդար ներկայացման վերակենդանացումն է: 1975-ին Բրոդվեյում բեմ ելած այդ շոուն ներկայացվեց 11 «Թոնիի», բայց բոլոր մրցանակները գիջեց այն ժամանակվա իր մրցակցին՝ «Կորդեբալետին»: Ֆոսիի մահից 10 տարի անց՝ 1997-ին, ներկայացումը վերածնվեց՝ այս անգամ նվաճելով 6 «Թոնի»: Նույնիսկ «Օսկար» էլ բաժին ընկավ Ռոբ Մարշալի «Չիկագոյին». նա Ֆոսիի դասերը լավ է սերտել: 42-ամյա Մարշալը, որը Ֆոսիին համարում է իր ուսուցիչն ու կուռքը, «Ամերիկյան գեղեցկություն» ֆիլմի հեղինակ Սեմ Մենդեսի հետ Բրոդվեյում նոր կյանք է տվել նաեւ վարպետի «Կաբարե» մյուզիքլին՝ դոկտոր Ֆրանկենշտեյնին վայել այդ արարչագործության համար արժանանալով «Թոնիի»: Թեեւ Մարշալը պնդում է, թե «Չիկագոն» նկարահանելիս որոշել է «վարպետի հետ չմրցել նրա դաշտում», ֆանի որ դա

«Չիկագո»

ռազմի պատճառով նախկինի չափ կենսախինդ չէ: Դա միայն հաստատում է դոփաթարի անհրաժեշտությունը:

Փախստականը

Ռոման Պոլանսկու «Դաշնակահարի» հաղթական հյուրախաղերը սկիզբ առան անցյալ տարվա Կաննի փառատոնից, որտեղ ֆիլմին շնորհվեց «Ոսկե արմավենու ճյուղը»: Դրան հետեւեցին Հոլիվուդի արտասահմանյան մրցույթների շնորհած ավանդի համար. Փիթեր Օ'Թուլ

■ Լավագույն լիամետրաժ մուլտիպլիկացիոն կինոնկար. «Ոգիներից գեղվածները», ռեժիսոր՝ Հայաո Միյածակի, Ճապոնիա

■ Լավագույն կարճամետրաժ մուլտիպլիկացիոն կինոնկար. «The Chubbchubbs»

■ Լավագույն վավերագրական կինոնկար. «Բոուլինգ Կոլումբինայի

ԸՆՏՐՅԱԼ ՆԵՐԸ

այսօրվա ամերիկացու հոգին 2001-ի սեպտեմբերի 11-ի կամ ներկայիս իրաքյան պատերազմի պատճառով նախկինի չափ կենսախինդ չէ: Դա միայն հաստատում է դոփաթարի անհրաժեշտությունը:

Փախստականը

Ռոման Պոլանսկու «Դաշնակահարի» հաղթական հյուրախաղերը սկիզբ առան անցյալ տարվա Կաննի փառատոնից, որտեղ ֆիլմին շնորհվեց «Ոսկե արմավենու ճյուղը»: Դրան հետեւեցին Հոլիվուդի արտասահմանյան մրցույթների շնորհած ավանդի համար. Ադրիեն Բրոուդին

Ադրիեն Բրոուդի

համար Ադրիեն Բրոուդին սիրված է եղել վերսկսել դաշնամուրի պարապմունքները, որ ժամանակին կիսաս է թողել: Թեեւ նա հավաստացնում է, թե գործիքի հետ «կարերը վերականգնելուց» հետո հետզհետե ավելի ու ավելի լավ է նվագել, պրոդյուսերները, չվստահելով նրա արթնացած տաղանդին, որոշել են Շոիլմանի նվագած գործերը ներկայացնել դաշնակահար Յանուշ Օլեյնիչակի կատարմամբ: Այնուամենայնիվ, Բրոուդին այնքան տպավորված էր նկարահանումներից եւ «իր գործին խենթի պես նվիրված» Պոլանսկու հետ համատեղ աշխատանքից, որ հավաստիացնում էր. «Անկախ ֆիլմի ընդհանուր հաջողությունից, ես ինձ հասանելիքն արդեն ստացել եմ «Դաշնակահարից»: Ֆրանսիական «Սեզարին» հաջորդած «Օսկարը» եւ ի լրումն՝ Հալի Բերիի անվերջանալի համբույրն ստանալուց հետո Բրոուդին կհամոզվի, որ չնայած լավագույն դերասանի դափնիներին, մարգարեի դերն իր համար չէ:

Արժե՞ հետաքրքրել

Նիկոլ Քիդմանն ասում է, թե կուզենար 85 տարեկանում, մահվան մահճում պառկած, բոլոր հիմքերն ունենալ դողդոջուն ձայնով իր գոհունակությունը հայտնելու ավելի հաճախ պահանջվող կարիերայից: Բայց արժե՞ այդքան հետաքրքրել մի խոստովանություն, որը կարելի է անել եւ հիմա:

Էջը պատրաստեց
ՀԱՎԵՆ ԲՈՅԱՋՅԱՆԸ

ՀԱՋՈՐԴ ՇԱԲԱԹ՝ ՀԵՌՈՒՍՏԱԷԿՐԱՆՆԵՐԻՆ

Արժե դիտել



3 ապրիլի, 23.05 Կենտրոն «Փորձ»★: Ռեժիսոր՝ Օլիվեր Հիրբիգել: Դերերում. Մորից Բլայբթրոյ, Քրիսթիան Բերթել, Օլիվեր Ստոկովսկի: Գերմանիա, 2001:

Գիտափորձի մասնակից 12 կամավորներ երկու շաբաթով դառնում են բանտարկյալներ եւ բանտապահներ: Ֆիլմն արժանացել է Գերմանական կինոակադեմիայի եւ Մոնրեալի փառատոնի մրցանակներին:

3 ապրիլի, 00.40 Россия

■ **«Իտալերեն սկսնակների համար»★★**: Ռեժիսոր՝ Լոնե Շերֆիգ: Դերերում. Անդերս Վ. Բերթելսեն, Աննե Էլեոնորա Յորգենսեն, Պետեր Հանցլեր: Դանիա, 2001:

Կոպենհագենի արվարձանի մի խումբ բնակիչներ, որ մասնակցում են իտալերենի դասընթացին, փոխ մարդիկ են՝ իրենց խորտակված ամուրջներով ու հույսերով:

4 ապրիլի, 23.40 Հայ TV

«Բռնիր ինձ, եթե կարող ես»★: Ռեժիսոր՝ Սթիվն Սփիլբերգ: Դերերում. Լեոնարդո Դի Կապրիո, Թոմ Հենկս, Քրիսթոֆեր Ուոլեն: ԱՄՆ, 2002:

Ֆրենկ Էբեգնեյլի՝ ամերիկյան ամենահայտնի խաբեբաներից մեկի պատմությունը նկարահանվել է նրա հեղինակած «Գողության արվեստը» գրքի հիման վրա:

6 ապրիլի, 23.00 Ռ1

■ **«Զբոսախնջույք»★★**: Ռեժիսոր՝ ժան Ռենուար: Դերերում. Պոլ Մյորիս, Կատրին Ռուվել, Ֆերնան Սարդու: Ֆրանսիա, 1959:

Երգիծական կատակերգություն արհեստական բեղմնավորման եղանակ հայտնագործած ֆիլիստերի մասին, որին այցելում է իսկական սերը:

6 ապրիլի, 23.10 Արմեն-Ակոբ

■ **«Վերջին կայարը»★★★**: Ռեժիսոր՝ Բեռնարդո Բերտոլուչչի: Դերերում. Ջոն Լոուն, Ջոան Չեն, Փիթեր Օ'Թուլ: Մեծ Բրիտանիա - Իտալիա - Չինաստան, 1986:

Չինաստանի վերջին կայսեր դրամատիկ կենսապատումն արժանացել է 9 «Օսկարի»:

6 ապրիլի, 23.40 Հայ TV

■ **«Ստալկեր»★★★**: Ռեժիսոր՝ Անդրեյ Տարկովսկի: Դերերում. Ալեքսանդր Կայդանովսկի, Անատոլի Սոլոնիցին, Ալիսա Ֆրեյնդլիխ: ԽՍՀՄ, 1980:

Տարկովսկու գլուխգործոցներից մեկը՝ ըստ Ստրուգացկի եղբայրների վիպակի, որի հերոսներն ուղեւորվում են անհայտ տիեզերական մարմնի ներխուժումից գոյացած խորհրդավոր տարածք:

ԱԶԳ Մարզական

Հաղթանակ հայկական ոճով բրիտանական եղանակի ներքո

Ուրախացնելու հերթն ազգային հավաքականինն է

Հայաստան–Հս. Իռլանդիա՝ 2–0 (1–0)

Աբովյան, «Կոտայք» մարզադաշտ, 28 մարտի:

Մրցավար՝ էմիլ Լարսեն (Դանիա):

Հայաստան– Աղուլա Բեսե, Բարսեղ Կիրակոսյան, Վալերի Ալեքսանյան, Վարդան Հովհաննիսյան, Կառլ Լոմբե, Լեւոն Փայաջյան (Արթուր Պետրոսյան, 63), Արսեն Մելոյան, Դավիթ Գրիգորյան, Գալուստ Պետրոսյան (Արտակ Հովհաննիսյան, 87), Կարեն Մուրադյան, Վահե Դավթյան (Սամվել Մելոնյան, 81):

Հս. Իռլանդիա– Էլիոտ Մորիս, Բրայան Քլոզ, Քրիստոֆեր Հերոն, Տերի Մակֆլին (Սեմի Քլինգեն, 72), Գորդոն Սիմս, Տոնի Կաղալդի, Մարկ Հյուգս (Փոլ Մակգրեթ, 64), Գեյրի Մելաֆ, Էդ Մակգարդլի, Ռոբերտ Քերի (Քեւին Բրենիֆ, 77), Օուեն Մորիսոն:

Գոլերը՝ Արսեն Մելոյան (25), Վահե Դավթյան (66):

Զգուշացվեցին՝ Արթուր Պետրոսյանը, Բրայան Քլոզը, Տոնի Կաղալդին:

PHOTOLURE

Անբարենպաստ եղանակի պատճառով խաղը սկսվեց 1 ժամ ուշացումով: Առաջ ծյունն ամբողջովին ծածկել էր խաղադաշտը: Բարեբախտաբար, ծյունը դադարեց եւ հնարավոր եղավ խաղն անցկացնել իչ թե շատ նպաստավոր պայմաններում: Երկու թիմերն էլ ակտիվ սկսեցին հանդիպումը եւ արդեն 7-րդ րոպեին դաշտի տերերի ծեռնարկած վտանգավոր գրոհից հետո հյուրերը սիրված էին գնդակը հանել անկյունային: 11-րդ րոպեին դարպասին վտանգավոր հարված կատարեց Կիրակոսյանը, սակայն հյուրերի դարպասապահն իր տեղում էր: Իրենց հերթին հյուրերն էլ մի քանի անգամ վտանգավոր գրոհներ ծեռնարկեցին: Հատկապես վտանգավոր էր նրանց բարձրից փոխանցումները, որից հետո 2 անգամ հյուսիսիռլանդացիները կարող էին գրավել մեր հավաքականի դարպասը: Երկու դրվագում էլ անվստահ խաղաց դարպասապահ Բեսեն: Առաջին դեպքում Ֆինեյի գլխի հարվածը մի փոքր շեղ ստացվեց, իսկ Սիմսի հարվածից հետո գնդակը դիպավ դարպասի ծողին:

Մեր ֆուտբոլիստները գրոհները հիմնականում կազմակերպում էին եզրերով: Դրանցից մեկի ժամանակ էլ 25-րդ րոպեին Վահե Դավթյանի աջ թեւով սրընթաց ճեղքումից հետո գնդակը հասցեագրվեց տուգանային հրապարակի մասույցներ, որտեղից Մելոյանը դիպուկ հարվածով բացեց հաշիվը:

Ընդմիջումից հետո հյուրերը փորձեցին բեկում մտցնել մրցակցությունում՝ մեծ ուժերով նետվելով գրոհի: 58-րդ րոպեին փորձելով կանխել վտանգավոր փոխանցումը, Կիրակոսյանը իչ էր մնում գնդակն ուղարկեր սեփական դարպասը: Դաշտի տերերն ընդել էին հակագրոհների մարտավարություն, որն իրեն լիովին արդարացրեց: 66-րդ րոպեին Վահե Դավթյանի աջ թեւով սրընթաց անցումն ավարտվեց դարպասի գրավումով: Հայ ֆուտբոլիստները կարող էին խոշոր հաշվով հաղթանակ տոնել, սակայն գոլային նպաստավոր պահերը չօգտագործեցին Ալեքսանյանն ու Մելոնյանը: Ինչեւէ, Հայաստանի երիտասարդական հավաքականն ընդական մրցաշարում առաջին հաղթանակը տոնեց: Այժմ հերթ ազգային հավաքականինն է:

Խաղից հետո կայացած մամուլի ասուլիսում հյուրերի մարզիչ Ռոյ Միլլերը, ընդհավորելով մրցակցին հաղթանակի առթիվ, նշեց, որ թեեւ առաջին խաղակեսում թիմն ունեցավ դարպասը գրավելու մի քանի պահեր, սակայն հաջող խաղացին Հայաստանի հավաքականի պաշտպաններն ու դարպասապահը: Իսկ ահա, դաշտի տերերին հաջողվեց շատ գեղեցիկ գոլ խփել: Եվ թեեւ երկրորդ խաղակեսում մարզիչը խաղադաշտ դուրս բերեց հարձակվողներին, սակայն այդպես էլ չհաջողվեց խուսափել պարտությունից:

Անդրանիկ Ադամյանը նշեց, որ կլիմայական անբարենպաստ պայմաններում սխրված էին փոխել խաղի մարտավարությունը՝ ապավինելով հակագրոհներին, քանի որ մրցակիցը ֆիզիկապես ուժեղ էր: Առաջին խաղակեսում տղաների գործողություններում լարվածություն էր զգացվում, սակայն հավաքականը կարողացավ օգտագործել գոլային պահերից մեկը: Հաղթանակն, իհարկե, ուրախացնում է: Մարզիչը հատկապես նշեց ֆուտբոլիստների հաղթանակի կամքի դրսեւորումը, հոգեբանական պատրաստությունը: Ճիշտ է, անբարենպաստ եղանակի հետեւանքով կոմբինացիոն խաղ չստացվեց, բայց կար ոգեւորություն, հաղթանակի կամք, եւ հաջողությունն, իհարկե, հաճելի է:

Ընդական 6-րդ խմբում երեկ կայացած Ուկրաինա–Իսպանիա հանդիպումն ավարտվեց ոչ–ոքի՝ 0-0:

Մրցաբարային աղյուսակ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Հունաստան	3	2	1	0	4–2	7
2. Հայաստան	3	1	1	1	4–3	4
3. Իսպանիա	3	1	1	1	1–1	4
4. Ուկրաինա	4	0	4	0	3–3	4
5. Հս. Իռլանդիա	3	0	1	2	1–4	1

ՖԻՖԱ-Ի ՎԱՐԿԱՆԻՇԸ

ՀՀ հավաքականը կրկին նահանջում է

ՖԻՖԱ-ն հրապարակել է ազգային հավաքականների վարկանիշային հերթական ցուցակը: Հայաստանի ընտրանին կրկին նահանջել է՝ զբաղեցնելով 113-րդ հորիզոնականը: Նախկին ԽՍՀՄ հանրապետությունների հավաքականներից ՀՀ ընտրանուն գերազանցում են Ռուսաստանի (22-րդ տեղ), Ուկրաինայի (45-րդ), Էստոնիայի (65-րդ), Բելառուսի (75-րդ), Լատվիայի (76-րդ), Վրաստանի (93-րդ), Ուզբեկստանի (99-րդ), Լիտվայի (106-րդ) եւ Ադրբեջանի (111-րդ) հավաքականները: Հայաստանի հավաքականից առայժմ հետ են Մոլդովան (116-րդ), Ղազախստանը (120-րդ), Թուրքմենստանը (135-րդ), Ղրղզստանը (168-րդ) եւ Տաջիկստանը (172-րդ): Իսկ ամենավատ տասնյակը հետեւյալ տեսքն ունի.

1. Բրազիլիա	853
2. Իտալիա	780
3. Ֆրանսիա	778
4. Արգենտինա	761
5. Գերմանիա	758
6. Հոլանդիա	752
7. Թուրքիա	732
8. Մեքսիկա	729
9. Անգլիա	725
10. ԱՄՆ	723

Խաղը հետաձգվել է

ՈՒԵՖԱ-ի որոշմամբ ապրիլի 2-ին նշանակված ֆուտբոլի եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարի Սերբիա եւ Չեռնոգորիա-Ուելս հանդիպումը հետաձգվել է եւ կկայանա օգոստոսի 20-ին: Պատճառն այն է, որ Սերբիայի եւ Չեռնոգորիայի վարչապետ Զորան Ջինջիչի սպանությունից հետո այդ երկրում ռազմական դրություն է մտցվել, ուստի իշխանությունները խնդրել էին ՈՒԵՖԱ-ին հետաձգել հանդիպումը:

Սերենա Ուիլյամսը եզրափակիչում

Մայամիում ընթացող թենիսի մրցաշարի եզրափակիչի առաջին մասնակիցն ամերիկուհի Սերենա Ուիլյամսն է: Կիսաեզրափակիչում նա հաղթեց բելգիուհի Կիմ Կլիյստերսին (6–4, 6–2): Ուիլյամսի մրցակցուհին հայտնի կդառնա Չանդա Ռուբինի եւ Ջենիֆեր Կապրիատիի մրցավեճից հետո:

Գլխավոր մրցանակն Անանդին

Հնդիկ գրոսմայստեր Վիշվանաթան Անանդի հաղթանակով ավարտվեց Մոնակոյի շախմատի ավանդական 12-րդ մրցաշարը: Անանդն անցկացրած 22 պարտիաներից միայն մեկում սեւ խաղաքարերով զիջեց Ալեքսանդր Մորոզեւիչին: Ավարտական տուրերում Անանդը ոչ–ոքի խաղաց եվգենի Բարեեւի հետ եւ հաղթեց գլխավոր հակառակորդ Վեսելին Թոփալովին (1,5-0,5): Արդյունքում հնդիկ գրոսմայստերը վաստակեց 14,5 միավոր եւ արժանիորեն նվաճեց գլխավոր մրցանակը: Հոդհանրապես այս տարի Անանդը շատ հաջող է ելույթ ունենում: Նա տարին սկսեց Վեյք Ան Զեեում տարած տղավորիչ հաղթանակով, այնուհետեւ վստահ հանդես եկավ Լինարեսում: Հարկ է նշել, որ սա Անանդի թվով 3-րդ հաջողությունն էր Մոնակոյի մրցաշարերում: Ավելի հաճախ՝ 4 անգամ գլխավոր մրցանակը նվաճել է միայն Վլադիմիր Կրամնիկը: 2 անգամ հաղթող է ճանաչվել Ալեխեյ Շիրով, մեկական անգամ հաջողությունը, մեկական անգամ հաջողությունը ուղեկցել է Մորոզեւիչին, Թոփալովին, Իվանչուկին, Լյուբոեւիչին եւ Կարպովին:

Հետաքրքրական է, որ Անանդը «կույր» շախմատում 7 միավորով 2-3-րդ տեղերը բաժանեց Մորոզեւիչի հետ, իսկ կայծակնային մրցաշարում 7,5 միավորով կրկին նույն դիրքերում է Լեկոյի հետ: «Կույր» շախմատում Լեկոյի հետ: «Կույր» շախմատում լավագույն արդյունքի հասավ Կրամնիկը՝ 8 միավոր, իսկ կայծակնայինիկը՝ 8 միավոր, իսկ կայծակնայինիկը՝ 8 միավոր: Ընդհանուր՝ Բարեեւը (8 միավոր): Ընդհանուր հաշվարկով մրցաշարի մյուս նուր հաշվարկով մրցաշարի մյուս մասնակիցների ցուցանիշներն այսպիսին են. Մորոզեւիչ, Լեկո՝ 13,5-ական միավոր, Կրամնիկ, Թոփալով՝ 13-ական, Գելֆանդ՝ 12, Շիրով՝ 11,5, Բարեեւ՝ 11, Ալմաշի՝ 9,5, Իվանչուկ՝ 9, վան Վելի՝ 8, Լյուբոեւիչ՝ 3,5:

Պլյուշենկոն նվաճեց աշխարհի չեմպիոնի տիտղոսը

Ռուսաստանցի գեղասահորդ եվգենի Պլյուշենկոն Վաշինգտոնում ընթացող գեղասահքի աշխարհի առաջնությունում լավագույնը ճանաչվեց մենասահքում: Բոլոր 9 մրցավարներն էլ միաձայն նրան առաջին տեղը շնորհեցին: Արծաթե մեդալին արժանացավ ամերիկացի Տիմոթի Գեյթը, բրոնզը բաժին հասավ ճապոնացի Տակեշի Խոնդային: Պարային զույգերի մրցավեճում օրհգիսավ ճապոնացի Տակեշի Խոնդային: Պարային զույգերի մրցավեճում օրհգինալ պարի կատարումից հետո լավագույնը Իրինա Լոբաչովա-Իլյա Ավերբուխ զույգն է: Կանանց մենասահքում առայժմ առաջատարի դերը սանձնել է ամերիկուհի Միշել Կվանը, որին հաջորդում է ռուսաստանցի Ելենա Սոկոլովան:

Երեւանի քաղաքապետարան
եւ
Ամերիկայի հայկական համագումարի հասարակական կազմակերպությունների ուսուցման եւ տեղեկատվական միջոցների կենտրոն

ԵՐԵՎԱՆ

npo training and resource center

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«2003 թ. սոցիալական աջակովության եւ առողջության առաջնային պահպանման ոլորտներում իրականացվող դրամաշնորհների ծրագիր»

Երեւանի քաղաքապետարանը եւ Ամերիկայի հայկական համագումարի հասարակական կազմակերպությունների ուսուցման եւ տեղեկատվական միջոցների կենտրոնը (ԱՀՀ ՀԿ կենտրոն) համատեղ հայտարարել են ***«2003թ. սոցիալական աջակովության եւ առողջության առաջնային պահպանման ոլորտներում իրականացվող դրամաշնորհների ծրագիր»:***

Ծրագիրը նպատակաուղղված է ***Հայաստանում սոցիալական եւ առողջության առաջնային պահպանման ծառայությունների մատուցման գործընթացում հասարակական կազմակերպությունների դերի բարձրացմանը:*** Դրամաշնորհային ծրագրի ֆինանսավորումը տրամադրում է ԱՄՆ միջազգային զարգացման գործակալությունը (USAID):

«2003 թ. սոցիալական աջակովության եւ առողջության առաջնային պահպանման ոլորտներում իրականացվող դրամաշնորհների ծրագրին» կարող են դիմել պատշաճաչափ գրանցված հասարակական կազմակերպությունները՝ ներկայացնելով վերը նշվածին համապատասխան ծրագրերի առաջարկներ: ***Մեկ դրամաշնորհի չափն է մինչեւ 4,712,000 դրամ: Ծրագրի իրականացման ժամկետը չպետք է գերազանցի 8 (ութ) ամիսը: Ծրագրերը պետք է իրականացվեն Երեւան քաղաքի տարածքում:***

Մրցույթում հաղթող ճանաչված ծրագրերի իրականացման վերահսկման նպատակով ստեղծվելու է ***վերստուգիչ հանձնաժողով:*** Հանձնաժողովում կընդգրկվեն Երեւանի քաղաքապետարանի, հասարակական կազմակերպության եւ ԱՀՀ ՀԿ կենտրոնի ներկայացուցիչներ:

Վերստուգիչ հանձնաժողովում ընդգրկվել ցանկացող ՀԿ-ները պետք է ներկայացնեն դիմում եւ կազմակերպության ղեկավար մարմնի համապատասխան որոշումը: Դիմումի ձեւն ամեն օր, ժամը 10:00-16:00-ը, բացի շաբաթ եւ կիրակի օրերը, կարելի է ստանալ Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական եւ սոցիալ-տնտեսական զարգացման վարչությունից հետեւյալ հասցեով. Գ. Լուսավորչի 13, 2-րդ հարկ, ≠ 203 սենյակ: Դիմումները պետք է հանձնել վերոնշյալ հասցեով մինչեւ ապրիլի 9, ժ. 16:00-ը: Վերստուգիչ հանձնաժողովում կընդգրկվի այն ՀԿ-ն, որը կհավաքի մրցույթի մասնակից հասարակական կազմակերպությունների ծայների մեծամասնությունը: Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական եւ սոցիալ-տնտեսական զարգացման վարչությունը մրցույթին մասնակցող ՀԿ-ների ծրագրերի առաջարկներն ընդունելու եւ գրանցելու պահին մրցույթի մասնակիցներին կտրամադրի վերստուգիչ հանձնաժողովի կազմի մեջ ընդգրկվել ցանկացող հասարակական կազմակերպությունների դիմումների ցուցակը, որից մրցույթի մասնակիցները կկատարեն իրենց ընտրությունը:

Վերը նշված հանձնաժողովում ընդգրկվելու դիմում ներկայացրած ՀԿ-ները դրամաշնորհային մրցույթին մասնակցել չեն կարող:

ԼՈՒԾԱՐՎՈՒՄ Է

«Առողջապահություն» առողջապահական ծառայություններ տրամադրողների հասարակական կազմակերպությունը, գրանցված ՀՀ արդարադատության նախարարությունում՝ 15.06.99 թ., գրանցման վկայականը՝ N1159:

Պարտատերերը երկամսյա ժամկետում կարող են դիմել ք. Երեւան, Էստոնական 9, բն. 24 հասցեով:

PP E&E Regional Participant Training Program

Armenia West NIS Europe Russia Caucasus Central Asian Republics

Performance Improvement · Technical Support · Participant Training · Grants · Partnerships

Սոցիալական ծառայող ուսումնական ծրագիր-2003

ՀԿ-ների մասնակցության հայտ

Կրթության զարգացման ակադեմիան (ԿԶԱ) ՀՀ Սոցիալական աջակցության նախարարության (ՍԱՆ), Երեւանի պետական համալսարանի (ԵՊՀ) եւ PADCO-ի Հայաստանի սոցիալական բարեփոխումների ծրագրի հետ համատեղ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ՍԶԳ) հայաստանյան առաքելության ֆինանսական աջակցությամբ, կազմակերպել են «Սոցիալական ծառայող» ուսումնական ծրագիրը՝ ՍԱՆ-ի, սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների, ինչպես նաեւ հասարակական կազմակերպությունների սոցիալական աշխատողների համար:

Մեկ տարի տեւողությամբ ծրագրի նպատակն է սոցիալական աշխատողների որակային գիտելիքներն ու հմտությունները զարգացնելու միջոցով, նվազեցնել անցման ժամանակաշրջանի սոցիալական բացասական ազդեցությունը: Ծրագիրը բաղկացած է երկշաբաթյա դասընթացներից Երեւանում եւ երկուական մեկշաբաթյա դասընթացներից ՀՀ յուրաքանչյուր մարզում, ինչպես նաեւ շարունակական հետծրագրային վերահսկումներից: Ծրագրի ավարտին ընթացքը հաջող հանձնած մասնակիցներին կտրվեն վկայականներ:

Ծրագրին մասնակցելու համար հետաքրքրված հասարակական կազմակերպությունների սոցիալական աշխատողները պետք է համապատասխանեն հետեւյալ չափանիշներին.

- Ունենալ սոցիալական աշխատողի 6 ամսից ավելի աշխատանքային փորձ,
- Ունենալ սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների հետ աշխատանքային փորձ, ինչպես նաեւ սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների կառուցվածքի եւ պարտականությունների լավ իմացություն,
- Ներկայացնել ՀԿ, որը նաեւակալից դեր ունի Հայաստանում խոցելի խմբերին ծառայությունների մատուցման գործում,
- Լինել այն տարածքի բնակիչ, որտեղ անցկացվում են վերապատրաստման դասընթացները:

Ծրագրին մասնակցելու համար հետաքրքրված անձինք պետք է դիմեն սոցիալական ծառայության տարածքային կենտրոններ՝ մասնակցության հարցաթերթիկը եւ ծրագրի նկարագրությունը ստանալու համար: Ուժի մեջ են նաեւ պատճենահանված դիմումածեւերը: Յուրաքանչյուր ՀԿ-ից դիմողների թիվը սահմանափակ չէ, սակայն կընտրվի մեկ մասնակից: Դիմողները լրացված դիմումածեւերը պետք է հանձնեն ՀՀ սոցիալական պաշտպանության նախարարության շենքում տեղակայված ԿԶԱ-ի գրասենյակ: Դիմումները ընդունվում են նաեւ ֆախսով կամ էլեկտրոնային փոստով: Ներկայացման վերջնաժամկետն է 2003թ. մարտի 3, ժ. 13:00:

Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք դիմել
Սյուզաննա Ջուհարյանին, հետեւյալ հասցեով՝
ՀՀ Սոցիալական պաշտպանության նախարարություն՝ Երեւան, Տերյան 69
Հեռ. 564857; FAX 564839
էլ-փոստ: *aedsw@arminco.com*
կամ
Մարինե Խոջաբեկյանին, ստորեւ նշված հասցեով՝
Երեւան, Այգեձոր 10
Հեռ. 221048, 225636; FAX 275686
էլ-փոստ: **aed@arminco.com**

AED
Academy for Educational Development

ՀՈՒՅ 1965 թ. գործող **Հայաստանի ուսանողական ջոկատների հանրապետական շտաբը,** որը հանդիսանում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի կամավորական ծառայության կոմիտեի անդամ, հրավիրում է որպես կամավորականների մասնակցելու եվրոպայի երկրներում, ԱՄՆ-ում, Հայաստանում միջազգային աշխատանքի ճամբարների ամառային ծրագրերին:

Պայմանները՝ անգլերեն (ֆրանսերեն, գերմաներեն) լեզվի տիրապետում, կամավորականի անդամավճարի եւ ուղեվարձի վճարման հնարավորություն:

Դիմումներն ընդունվում են հետեւյալ հասցեով՝ **Կորյունի 19ա, 7-րդ հարկ:**
Հեռ.՝ 522788, 522701

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Քորթհիլ կորպորացիայի Հայաստանի մասնաճյուղն աշխատանքի է հրավիրում մեխանիկների հետեւյալ որակավորմամբ.

Շինարարական տեխնիկայի մասնագետ, որը կկատարի շինարարական տեխնիկայի վիճակի ստուգման, ինչպես նաեւ վերանորոգման աշխատանքներ:

Թեկնածուները կարող են զանգահարել Քորթհիլ կորպորացիայի Հայաստանի մասնաճյուղի գրասենյակ՝ 59-33-88 հեռախոսահամարով:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՏՆՈՒՄ Է

– 2003 թ. ապրիլի 1-ից ուգելվում է «2001» թվագրված ակցիզային դրոշմանիշներով դրոշմավորված տեղում արտադրված ալկոհոլային խմիչքների եւ ներմուծված ալկոհոլային խմիչքների ու ծխախոտի արտադրանքի իրացումը:

Կազմակերպությունները «2001» թվագրված ակցիզային դրոշմանիշներով դրոշմավորված ալկոհոլային խմիչքների եւ ներմուծված ծխախոտի արտադրանքի մնացորդները վերադրոշմավորելու համար սահմանված կարգով կարող են դիմել մինչեւ 2003 թ. ապրիլի 20-ը:

Mobilising Good Practice to Reduce Poverty

The British government's Department for International Development **(DFID)** has contracted Pricewaterhouse Coopers for the implementation of this exciting modernisation project over the next four years. We are looking for experienced and well qualified people to work with our foreigh consultants, with knowledge **in public sector reform in Central Government.**

The primary objective of this important project is to improve the efficiencym effectiveness, transparency and responsiveness of all levels of public administration in Armenia.

The project will major on the Ministries of Education, Social Security and Health and link with other Ministries and agencies as required.

We envisage very close collaboration with key donors such as EU, World Bank and USAID to ensure maximum synergy and benefit for our client, the Public Service Reform Commission on behalf of the Government of Armenia.

We are recruiting for four positions.

1. **Structural & Organisational** analysis and development of new strategies for the modernisation of Ministries. *- Ref: 002*
2. **Human Resource** Management & Development in the public sector *- Ref: 003*
3. **Legal aspects** of Civil/public service modernisation *- Ref: 004*
4. **Civil Society** involvement in the NGO/governmental processes *- Ref: 005*

We are also recruiting first-class, experienced English language interpreters/translators *- Ref: 006*

Part-time/flexible contracts are possible and equal opportunities are guaranteed to all applicants.

In the first instance kindly send your CV to Laura Khalatyan by email on larkhal@yahoo.com

We anticipate holding preliminary interviews week commencing 31st March, final selection during week commencing 7th April and contracts to commence 14th April.

PRICEWATERHOUSECOOPERS

ՅԳՈՒՇԱՑՈՒՄ

Ավելի քան 4 տարիներ **ՆՈՒՆԿ**-ի կողմից հրատարակվող
ԵՐԵՎԱՆՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ
YEREVAN GUIDE
ՁԲՈՍԱՇՐՋԻԿԱՅԻՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆԸ
մի խումբ գեղծարարների միջոցով գրագողացված անունով կրկնօրինակվել եւ ներկայացվում է որպես
Երեւանյան ուղեցույցը փոխարինող հրատարակություն:

Խնդրվում է չխաբվելու համար, նախքան պայմանավորվելը հանգամանքը ստուգել հետեւյալ հեռախոսահամարներով կամ էլ. փոստով՝
Հեռ.՝ 56.82.25 եւ 56.83.25, Ֆաքս՝ 56.02.16
email: accea@netsys.am

ԵՐԵՎԱՆՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ
YEREVAN GUIDE
հրատարակվում է Նորարար փորձառական արվեստի կենտրոնի **ՆՈՒՆԿ** միջոցով եւ ամբողջ շահույթը հատկացվում է հայ ժամանակակից արվեստի զարգացման նպատակին

ԵՐԵՒԱՆՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑՈՒՄ ԳՈՎԱԶԴԵԼՈՎ ԴՈՒՔ ՆԱԵՒ ՆԵՑՈՒԿ ԵՔ ՀԱՆԴԻՍԱՆՈՒՄ ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԱՐԵՒՈՐԱԳՈՒՅՆ ՈԼՈՐՏՆԵՐԻՑ ՄԵԿԻՆ

«Առաջին ապահովագրական» ՍՊԸ

Հաշվապահական համառոտ հաշվեկիռը առ 01.01.2003 թ.

հազ. դրամ

Ակտիվներ	Գումարը առ 01.01.2003 թ.	Պասսիվներ	Գումարը առ 01.01.2003 թ.
1. Ոչ ընթացիկ ակտիվներ	53261	Սեփական կապիտալ	
այդ թվում		որից՝	61962
հիմնական միջոցներ	32511	ա) կանոնադրական	
երկարաժամկետ ֆին.		կապիտալ	50000
ակտիվներ	20750	կարճաժամկետ	
2. Ընթացիկ ակտիվներ	105111	պարտավորություններ	107931
այդ թվում		այդ թվում՝	
ա) պաշարներ	608	ա) ապահովագրական	
բ) վերաապահով. բաժինը		պահուստներ	50658
ապահովագրական		բ) կարճաժամկետ	
պահուստներ	27925	կրեդիտորական	
գ) կարճաժամկետ		պարտ	57273
դեբիտորական պարտքեր	13154	որից՝ հաշվարկներ	
դ) կարճաժամկետ		բյուջեի հետ	5630
ֆինանսական			
ներդրումներ	46516		
ե) դրամական միջոցներ	16908		
Ընդամենը ակտիվներ	158372	Ընդամենը պասսիվներ	158372

2003 թ. ֆինանսական հաշվետվությունը

հազ. դրամ

Ցուցանիշներ	Գումարը
Եկամուտներ	105449
այդ թվում	
1. Ոչ կյանքի ապահովագրությունից	91494
2. Գործառնական այլ եկամուտներ	13955
Ծախսեր	65017
այդ թվում	
1. Ապահովագրական հատուցումներ	10569
2. Գործառնական ծախսեր	43792
3. Գործառնական այլ ծախսեր	10656
Շահույթ	40432
Շահութահարկ	8539
Զուտ շահույթ	31893

Աուդիտոր՝ Ա. Հակոբյան

Աուդիտորական եզրակացություն

Առ 1 հունվարի 2003 թ. դրությամբ հաշվապահական համառոտ հաշվեկիռը եւ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը տալիս են կազմակերպության ճշմարիտ եւ իրական պատկերը:
«Հայաուդիտ» ՍՊԸ աուդիտորական գործունեության N 004 արտոնագիր:

ARG
ՀԱՅՕՒՍԳԱԶԱՐԴ

Բնական գազի հարգելի բաժանորդներ

1.04

Օգտվեք միայն գործարանային արտադրության գազասարքերից, պիտանի ու մաքրված ծխամուղիներից: Գազի սարքավորումների օգտագործման կանոնները չպահպանելը կարող է վթարների եւ դժբախտ դեպքերի պատճառ հանդիսանալ:
Վստահեք եւ համագործակցեք ներքնային գազի համակարգը սպասարկող ընկերությունների հետ:
Դա ձեր անվտանգության պահովման երաշխիքն է:

«ՀայՕւսգազարդ» ՓԲԸ

«Գինդ» տպագրատուն, Երեւան, Բագրատունյաց 70ա Գրանցման թիվ 65. Դասիչ 69150. Տպաքանակը՝ 5000 Ստորագրած է տպագրության՝ 28. 3. 2003 Գինը՝ 100 դրամ